Ա.Վ.ՔՈՍՅԱՆ

ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԽԽԻՅԱՎԱՆ

(ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ)



ԵՐԵՎԱՆ 1997

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ (ծնվ. 1956, Երևան): ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու: Զբաղվում է Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքակրթություններով: Երեք տասնյակից ավելի հետազոտությունների հեղինակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԽԽԻՅԱՎԱՆ

(ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ)

Ա II 84138

Մեկենասությամբ
Արմէն և Բերսաբէ Ճերեճեան Հիմնադրամի
ԱՄՆ

This Publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc.
USA

NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ARAM KOSSIAN

THE HITTITE EMPIRE AND AHHIYAWA

(THE TROJAN WAR)



YEREVAN 1997

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-արևմտյան Փոքր Ասիան՝ պատմական Տրոադան, քաղաքակրթության զարգացման բոլոր փուլերում յուրատեսակ կամուրջ է եղել Արևելքի և Արևմուտքի միջև: Այստեղով են ընթացել Եվրոպայից Ասիա և հակառակը ուղղված էթնիկական տեղաշարժերը և մշակութային փոխազդեցությունները: Խեթական պետականության կազմավորման շրջանից ուսումնասիրվող տարածքը մշտապես գտնվել է խեթերի արտաքին քաղաքական հետաքրքրությունների շրջանակներում: Խեթական արքա Թուդխալիյաս II-ի (մ.թ.ա. XVդ. երկրորդ կես) կողմից նվաճվելուց հետո Տրոադան, մինչև Խեթական տերության տրոհումը XIIդ. սկզբներին, գերազանցապես գտնվել է Խաթթիի հսկողության ներքո: Այս նույն ժամանակներում դեպի արևմտյան Փոքր Ասիա և հատկապես Տրոադա ընթանում էր քաղաքական և տնտեսական մեկ այլ հանդիպակաց ալիք, որը լայն ծավալում ստացավ XIIIդ. առաջին կեսին: Խոսքը միկենյան աշխարհի մասին է, որի ներթափանցումը Փոքր Ասիա ժամանակ առ ժամանակ ընդունում էր բացահայտ առճակատման տեսք Խաթթիի և տարածաշրջանի՝ խեթերի հանդեպ լոյալ քաղաքական միավորների հետ:

Մասնագիտական գրականության մեջ մինչև 1980-ական թվականները անվերապահորեն գերիշխում էր մի տեսակետ, ըստ որի Հոմերոսի անմահ պոեմի՝ «Իլիականի» միջոցով մեզ հասած Հին Հունաստանի «հերոսական դարաշրջանի» առավել նշանավոր իրադարձությունը՝ Տրոյական պատերազմը (այսուհետև՝ ՏՊ) Ախխիյավայի[1] արևմտյան Փոքր Ասիա ներթափանցման խտացված պատկերն է: Ընդ որում «Իլիականի» պատմական ետնախորք են դիտվում խեթա-ախխիյավյան հարաբերությունների սրման բարձրակետի շրջանի (XIIIդ. առաջին կես) իրադարձությունները[2]: Սակայն վերջին շրջանում մի շարք մասնագետներ կասկածի տակ են առել ինչպես ՏՊ-ի հավաստիությունը, այնպես էլ Ախխիյավան միկենյան աշխարհի հետ նույնացման մասին ավանդական տեսակետը:

Առաջարկվող ուսումնասիրության մեջ, խեթական աղբյուրների, հնագիտական նյութերի և նորագույն ուսումնասիրությունների լույսի ներքո քննարկվում են ՏՊ-ին առնչվող բոլոր խնդիրները: Փորձ կարվի գնահատելու այդ իրադարձության հարաբերակցությունը XIIIդ. երկրորդ կեսին միկենյան աշխարհում սկսված քաղաքական և տնտեսական ճգնաժամին:

ԽԵԹԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ

Փոքր Ասիայի արևմուտքը դեռ Հին խեթական թագավորության ժամանակաշրջանից (մ.թ.ա. XVII-XVIդդ.) առանձնահատուկ տեղ ուներ Խաթթիի քաղաքական և տնտեսական կյանքում: Նվաճվելով առաջին անգամ Լաբարնայի կողմից (XVIIդ. կեսեր)[3], այստեղի քաղաքական միավորները հետագայում դուրս եկան Խեթական տերության ազդեցության ոլորտից: XVդ. երկրորդ կեսին խեթերը կրկին ձեռնարկեցին դրանց վերանվաճման գործը: Թուդխալիյաս II-ը կարողացավ նվաճել ողջ տարածաշրջանը, որն այդ պահին միավորված էր «Ասսուվա երկրներ» կոչվող միության մեջ[4]: Քիչ ավելի ուշ, Թուդխալիյաս III-ի կառավարման վերջին շրջանում արևմուտքը կրկին անկախացել էր: Ասսուվային փոխարինած Արցավա միությունը փորձեց նույնիսկ ընդարձակվել Խաթթիի տարածքների հաշվին. արցավյան առաջխաղացումը վկայված է մինչև Հալիսի մեծ ոլորանից հարավ ընկած շրջաններ[5]: Սուպպիլուլիումաս I-ը իր կառավարման սկզբում վերականգնեց իրերի նախկին վիճակը[6], իսկ Մուրսիլիս II-ի վճռական գործողությունների շնորհիվ, նրա իշխանության երրորդ տարում (մոտավորապես 1320թ.), Արցավան ծանր պարտություն կրեց. խեթերը նվաճեցին Արցավայի մայրաքաղաք Ապասասը (անտիկ շրջանի Եփեսոս), իսկ նրա արքա Ուխխացիտիսը ծովով փախավ իր դաշնակից Ախխիյավա մայրցամաքային Հունաստան (տե՛ս ստորև)[7]:

Արցավյան միությունը բաղկացած էր բուն Արցավայից (հետագայի Լիդիայի կենտրոնական մասը) և մի շարք այլ քաղաքական միավորներից՝ Միրա-Կուվալիյա[8], Սեխա գետի երկիր[9], Խապալլա[10], Ցիպպասլա-Խարիյատա[11] և Վիլուսա[12]: Մուրսիլիսի արշավանքի հետևանքով արցավյան դաշինքը տրոհվում է և նրա բաղկացուցիչ մասերից միայն երկուսն են XIIդ. խեթական աղբյուրներում շարունակում որոշակի դեր կատարել տարածաշրջանում[13]:

Արևմտյան Փոքր Ասիայի երկրները XIIդ. իրավական առումով հանդիսանում էին Խեթական տերությունից կախյալ երկրներ, սակայն նշված ժամանակահատվածի մեծ մասի ընթացքում դրանք վերածվում են Կուվախնձորի Խաթթիի և Ախխիյավայի միջև: Մուվատալլիս II-ի օրոք խեթա-եգիպտական հարաբերությունների սրման բարձրակետի շրջանում Ախխիյավայի բացահայտ հովանավորությամբ արևմուտքում սկսվում է մի գործընթաց, որը կարելի է բնորոշել որպես «կողմնորոշման

փոփոխություն»: Այն իրականացվում էր երկու եղանակով՝ 1) անջատողական ուժերի հովանավորում, 2) խեթամետ ուժերի նկատմամբ հարկադրական միջոցառումների իրականացում (ռազմական ագրեսիա): Առկա գրավոր աղբյուրները թույլ են տալիս ենթադրելու, որ Ախխիյավայի նման քաղաքականությունը գլխավորապես իրականացվում էր տեղական միջոցներով: Համենայնդեպս, ողջ XIIIդ. ընթացքում արևմուտքում տեղի ունեցած իրադարձությունների մասին պատմող խեթական տեքստերում ոչ մի հիշատակություն չկա ախխիյավյան զորքերի որևէ գործողության մասին:

ՏՐՈՅԱ-ՀԻՍԱՐԼԸԿԻ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուշբրոնզեդարյան Տրոյայի հնագիտական շերտերի ժամանակագրությունը ամբողջությամբ հենվում է այստեղից հայտնաբերված միկենյան խեցեղենի թվագրման վրա, որն իր հերթին թվագրվում է եգիպտական խեցեղենի օգնությամբ: Այստեղից բխում է, որ Տրոյայի ժամանակագրությունը հեռու է ստույգ լինելուց: Հարկ է նշել նաև, որ այսօր հենց եգիպտագիտության ասպարեզում չկա միասնական ժամանակագրություն:

Եվ այսպես, մայրցամաքային Հունաստանի և էգեյան ծովի կղզիների պատմության ուշբրոնզեդարյան ժամանակաշրջանը, ըստ միջին ժամանակագրության, բաժանվում է հետևյալ փուլերի՝ LH II (մոտավորապես 1500-1425թթ.), LH IIIA (մոտավորապես 1425-1300թթ.), LH IIIB (մոտավորապես 1300-1200թթ.)[14]:

Ժամանակագրորեն ներկա ուսումնասիրությանն առնչվում են Տրոյայի հետևյալ ենթաշերտերը՝ Տրոյա VIh (LH IIIA2 - IIIB1 անցման փուլից[15] մինչև XIIIդ. երկրորդ կեսի ինչ-որ պահ[16], մոտավորապես 1300-1230/20թթ.), Տրոյա VIIa (տևել է մեկ-երկու սերունդ և ավարտվել դարավերջին՝ ավերածությամբ և հրդեհով)[17], Տրոյա VIIb1 (XIIIդ. վերջից՝ հազիվ մեկ սերունդ)[18], Տրոյա VIIb2 (XIIդ.):

Վերոհիշյալ շերտերը մշակութային առումով հետևյալ պատկերն են ներկայացնում:

Տրոյա VIh-ի ավերումից հետո (հարձակման արդյունքում կամ երկրաշարժի պատճառով, տե՛ս ստորև), VIIa-ում կյանքի եղանակը որոշակիորեն փոխվում է: Տրոյա VIh-ը բնորոշում են խոշոր կառույցները, լայն փողոցները, իսկ VIIa-ում տները փոքր են, զգացվում է տարածքի պակաս[19]: Այնուամենայնիվ, այս երկու շերտերի միջև մշակութային խզում չկա:

Տրոյա VIIa-ի ավերումից հետո, չնայած նոր բնակչության ներհոսքին, որի վկայությունը հյուսիսբալկանյան զուգահեռներ ունեցող Coarse Ware-ն է[20], տեղական մշակույթը գոյատևել է: Շարունակվել է խեցեգործական ավանդույթը՝ «Գորշ միևնական», Red-washed և Tan Ware-ի արտադրությունը[21]: Coarse Ware-ի հետ միասին, Տրոյա VIIb1-ում առկա է նաև LH IIIC խեցեղենը, որը թույլ է տալիս VIIa-ի ավերումը թվագրելու XIIIդ. վերջերով - XIIդ. սկզբներով[22]: Հազիվ մեկ սերունդ գոյատևած այս քաղաքի մշակույթը կտրուկ փոխվում է Տրոյա VIIb2-ում. հայտնվում է Buckelkeramik[23] կոչված խեցեղենը՝ թրակյան և նույնիսկ Հունգարիայի ուշբրոնզեդարյան Lausitz մշակույթի զուգահեռներով (տե՛ս ստորև): Այնուամենայնիվ, բուն տրոյական խեցեղենը դեռ որոշ ժամանակ արտադրվում է[24]:

Այսպիսով, XIIIդ. ընթացքում և XIIդ. սկզբներին Տրոյայում առկա են երկու հաջորդական ավերածություններ՝ Տրոյա VIh-ը և Տրոյա VIIa-ն, ինչպես նաև օտար ծագման երկու մշակույթների մուտք՝ Coarse Ware-ը Տրոյա VIIb1-ում և Buckelkeramik-ը՝ Տրոյա VIIb2-ում:

Եթե վերոհիշյալ պատկերի հարցում մասնագետների ճնշող մասը համակարծիք է, ապա նույնը չի կարելի ասել Տրոյան ավերողների ինքնության, ՏՊ-ի հետ դրանց ունեցած առնչության մասին:

Հոմերոսյան պոեմներում նկարագրվող ՏՊ-ի պատմականության խնդրի շուրջ առկա իրարամերժ տեսակետների հիմքում ընկած է այն մտայնությունը, թե միկենյան քաղաքակրթության գոյության վերջին փուլում (XIIIդ.) մայրցամաքային Հունաստանի ախայան քաղաքների և Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Տրոյայի միջև ընթացած պատերազմի վերաբերյալ կույր պոետի հաղորդած տեղեկություններն անպայման պիտի ինչ-որ եղանակով արտացոլվեին XIIIդ. գրավոր աղբյուրներում (տվյալ պարագայում՝ խեթական) և արևմտյան Փոքր Ասիայի ու Հունաստանի համաժամանակյա գրավոր նյութերում: Եթե այդպիսի հստակ զուգահեռներ և արձագանքներ չկան կամ դրանք բավարար չեն, ապա ՏՊ-ը պիտի դիտել որպես Հոմերոսի երևակայության արդյունք, իսկ եթե կան, այն իրոք եղել է: Ստորև ներկայացնենք ՏՊ-ի պատմականությանն առնչվող առավել կարևոր վիճահարույց խնդիրները:

ՀՈՄԵՐՈՍՅԱՆ ՏՐՈՅԱՅԻ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄԸ

Հայտնի է, որ Տրոադայի արևմտյան մասում գտնվող Հիսարլըկ բլրի՝ Հ.Շլիմանի կողմից պեղված «Հոմերոսյան Տրոյան» ոչ մի առնչություն չունի ոչ միայն ուշբրոնզեդարի, այլև ընդհանրապես մ.թ.ա. II հազարամյակի հետ: Այն ներկայացնում է մ.թ.ա. III հազարամյակը: Ինչպես նշվեց նախորդ ենթաբաժնում, հոմերոսյան քաղաքը պիտի փնտրել Տրոյա VI և VII շերտերից մեկում (իրենց բազմաթիվ ենթաշերտերով), քանի որ այդ ժամանակահատվածով է թվագրվում LH I-III փուլը մայրցամաքացին Հունաստանում և էգեյան ծովի կղզիներում, այսինքն,ախայան դարաշրջանը: Վերը նշվեց նաև այս նույն ժամանակահատվածում Հիսարլըկի վրա գտնվող քաղաքի՝ հնագիտորեն վկայված երկու ավերածությունների մասին: Այս երկուսից որի ավերումը կարող էր հիմք ծառայել Հոմերոսի մոտ նկարագրվող իրադարձության համար:

Եթե խնդրի պարզաբանման գործում նախապատվությունը տանք Հոմերոսին, որը Տրոյան ներկայացնում է որպես բարձր և ամուր պարիսպներով ու շքեղ կառույցներով մի ծաղկուն քաղաք[25], ապա, անկասկած, գերադասելի կլիներ հակվելու Տրոյա VIh-ի կողմը. այն իրոք համեմատելի չէ ո՛չ իր նախորդների, ո՛չ էլ հետնորդների, այդ թվում VIIa-ի հետ: Այս դեպքում հնարավոր է ՏՊ-ը դիտել մ.թ.ա. XIII դարի առաջին կեսին Փոքր Ասիայի արևմուտքում խեթական աղբյուրներով վկայված քաղաքական վայրիվերումների ենթատեքստում: Խեթական արքաներ Խաթթուսիլիս III-ի և Թուդխալիյաս IV-ի տեքստերում բազմաթիվ վկայություններ կան այստեղ Ախխիյավայի կողմից հովանավորվող ոմն Պիյամարադուսի հակախեթական գործունեության վերաբերյալ: Վերջինիս նույնիսկ հաջողվել էր գրավել մի շարք երկրներ, այդ թվում նաև Վիլուսան, որը սովորաբար դիտվում է որպես հոմերոսյան Իլիոնի խեթական ձևը[26]: Հավանաբար, Պիյամարադուսի գործունեության արդյունքում էր գահազրկվել Վիլուսայի արքա Վալմուն, որին իր օրինական գահին վերադարձնելու նպատակով Թուդխալիյաս IV-ը բանակցում էր արևմտափոքրասիական երկրներից մեկի, հավանաբար, Միլլավանդայի արքայի հետ[27]:

ՏՊ-ի այսպիսի ժամանակագրությունը, թվում է, նպատակահարմար է ոչ միայն այն առումով, որ Տրոյա VIh-ը իրոք լիովին համընկնում է քաղաքին տրվող հոմերոսյան մակդիրներին, այլև

առկա է Փոքր Ասիայի արևմուտքում գրավոր աղբյուրներով վկայված խեթա-ախխիյավյան բազմամյա հակամարտությունը, որն իր բարձրակետին էր հասել հենց XIIIդ. առաջին կեսին, և որի ընթացքում գրավվել էր նաև Վիլուսան՝ հոմերոսյան քաղաքի ենթադրվող զուգահեռը: Հազիվ թե Տրոյայի տասնամյա պաշարումը հնարավոր լինի մեկնաբանել որպես պատերազմ մի կոնկրետ քաղաքի դեմ, որքան էլ որ ամուր պարիսպներ ունենար այն: Դա կարող էր լինել տևական պայքար[28], ընդ որում ոչ միայն ընդդեմ Տրոյայի, այլև նրա բազմաթիվ դաշնակիցների՝ փռյուգացիների, թրակացիների, լիկիացիների և այլոց դեմ:

Հօգուտ Տրոյա VIh- ի է վկայում նաև շատերի կողմից անվերապահորեն ընդունվող այն մտայնությունը, թե ՏՊ-ի պահին պիտի անպայման գոյություն ունենար հզոր և կայուն միկենյան աշխարհ, որն ի վիճակի լիներ ձեռնարկելու միասնական հեռավոր ու տևական արշավանք: Այնինչ, Տրոյա VIIa-ի ավերման շրջանում նման արշավանք հնարավոր չէր իրականացնել, քանի որ այդ նույն ժամանակաշրջանում կամ քիչ անց միկենյան կենտրոններում առկա էին խոր ճգնաժամի նշաններ, որն ավարտվեց դրանց անկումով և բնակչության ապաբնակեցմամբ[29]:

Եվ, վերջապես, ևս մեկ փաստարկ հօգուտ Տրոյա VIh-ի: Ըստ անտիկ ավանդության[30], միկենյան քաղաքների անկումը տեղի է ունեցել ՏՊ-ից երկու սերունդ հետո: Հայտնի է, որ առաջինը թվագրվում է մոտավորապես 1200թ. կամ քիչ ավելի ուշ շրջանով, որի վկայությունը ոչ միայն միկենյան կենտրոնների ավերածություններն ու ապաբնակեցումն է, այլև LH IIIB խեցեղենի վերացումը և LH IIIC-ի հայտնվելը[31]: Մ.թ.ա. 1200թ. երկու սերունդ ավելի վաղ իսկապես կհասցնի XIIIդ. կեսերը:

Սակայն, այսուհանդերձ, բերված փաստարկները դեռևս թույլ չեն տալիս միանշանակ եզրակացնելու Տրոյա VIh - հոմերոսյան Տրոյա համադրության օգտին: Բավական լուրջ են նաև Տրոյա VIIa-ի օգտին վկայող փաստարկները:

Առաջինը LH IIIC1 տիպի թվով ութ խեցեբեկորների առկայությունն է Տրոյա VIIa-ում: XIIIդ. կեսերը այս խեցեղենի համար շատ վաղ է, քանի որ այն ոչ մի տեղ այլևս վկայված չէ: Եթե դրանք պատահաբար չեն ընկել հաջորդ՝ VIIb1 շերտից[32], ապա պիտի ենթադրել, որ Տրոյա VIIa-ի ավերումը տեղի է ունեցել LH IIIB - IIIC անցման փուլում, այսինքն, XIIIդ. վերջերին[33]: Այս դեպքում հնարավոր է կապ գտնել Տրոյա VIIa-ի ավերման և ՏՊ-ի ժամանակի վերաբերյալ Թուկիդիդեսի հաղորդած տեղեկության միջև՝ մոտավորապես 1225թ.[34]:

Երկրորդ, Տրոյա VIIa-ում ավերման պահին առկա են

պատերազմական նախապատրաստությունների ակնհայտ նշաններ (մթերքի մեծ պաշարների կուտակում, հավելյալ բնակչության մուտք քաղաք և այլն)[35]: Այնինչ, մասնագետների մի մասը, ինչպես նշվեց վերը, Տրոյա VIh-ի կործանումը հակված է վերագրելու երկրաշարժին, բացառելով արտաքին՝ թշնամական հարձակման գործոնը[36]:

Երրորդ փաստարկը բխում է Տրոյա VIIa-ի ավերումը XIIIդ. վերջին - XIIդ. սկզբին Մերձավոր Արևելքում սկսված խոշոր միգրացիաների ենթատեքստում դիտելուց: Եթե ճիշտ է Հոմերոսը, ասելով թե հույները հիմնահատակ կործանեցին Տրոյան և բնակչությանը ոչնչացրեցին կամ գերևարեցին, ապա քաղաքը վերականգնած նոր բնակիչները իրենց հետ պիտի նոր մշակույթ և կենցաղ բերեին: Իսկ քանի որ Տրոյա VIh-ի և VIIa-ի միջև մշակութային խզում չկա (փոփոխությունները միայն որակական են), ապա Տրոյա VIIa-ի և VIIb-ի միջև այդպիսի խզումը արդեն անվիճելի փաստ է. Տրոյա VIIb2-ում հայտնվում է LH IIIC-ն և «բարբարոսական» խեցեղենը՝ թրակյան ծագման Buckelkeramik-ը[37]: Այս փաստարկի էությունը հետևյալն է:

XIIIդ. վերջերին սկսված էթնիկական տեղաշարժերի ընթացքում մայրցամաքային Հունաստանի բնակչության արտագաղթի մի ալիքի կրողները կարող էին ձգտել հաստատվել Տրոադայում, ինչպես դա տեղի ունեցավ Կիպրոսում, Կիլիկիայում և այլուր: Դրանով կարելի է բացատրել LH IIIC խեցեղենի հայտնվելը նշված վայրերում:

Այսպիսով, հոմերոսյան Տրոյայի նույնացումը հնագիտական Տրոյայի շերտերից որևէ մեկի հետ չափազանց բարդ խնդիր է, եթե փորձում ենք հենվել մի կողմից միայն «Իլիականի» ու «Ոդիսականի», մյուս կողմից խեթական տեքստերի և հնագիտական նյութերի համադրման վրա: Այն ավելի է խճճվում խեթական տեքստերի հիշատակած Ախխիյավա երկրի և միկենյան աշխարհի հարաբերակցության խնդրում գոյություն ունեցող լուրջ տարաձայնությունների (տե՛ս հաջորդ ենթաբաժինը) և հոմերոսյան Տրոյայի՝ Հիսարլըկի հետ նույնացման ավանդական տեսակետի նկատմամբ վերջին շրջանում նկատվող թերահավատության պատճառով:

Այս խնդրում նոր մոտեցում պիտի համարել Շ.Հիլլերի վարկածը երկու ՏՊ-ների գոյության մասին[38]:

«Իլիականում» տեղեկություն կա Ագամեմնոնի գլխավորած Տրոյական արշավանքից մեկ սերունդ առաջ Հերակլեսի կողմից Տրոյայի գրավման մասին: Հերակլեսին օգնում էր էգինեցի Այակոսի որդի Տելամոնը՝ ՏՊ-ի հերոսներից Այաքսի հայրը: Հեղինակը ուշադրություն է հրավիրում հետևյալ նկատառումների վրա.

1) Հերակլեսի և Ագամեմնոնի գլխավորած արշավանքները Տրոյա տեղի են ունեցել երկու հաջորդական սերունդների ընթացքում, այսինքն, դրանք ընդգրկում են Տրոյա VIh-ի վերջին փուլը և VIIa-ն:

2) Եթե նույնիսկ Տրոյա VIIa-ի ավերման պահին միկենյան աշխարհի անկումն արդեն սկսվել էր, ապա դա դեռ չի նշանակում, որ հնարավոր չէր կազմակերպել Տրոյական արշավանքը[39]: Ավանդությունը վկայում է այն մասին, որ արշավանքը տեղի է ունեցել վերահաս վտանգի և լայն միգրացիաների շրջանում, երբ շատ հերոսներ չվերադարձան հայրենիք, այլ բնակություն հաստատեցին օտար երկրներում[40]:

3) Փայտե ձիու մոտիվը, հավանաբար, պիտի վերաբերեր Տրոյա VIh-ի ավերմանը: Ըստ ավանդության, Տրոյայի արքա Լաոմեդոնի խնդրանքով Պոսեյդոնն ու էգինեցի Այակոսն էին կառուցել Տրոյայի պարիսպները: Հրաժարվելով տալ խոստացած պարգևը, Լաոմեդոնը առաջ է բերում Պոսեյդոնի զայրույթը, որը քաղաքի վրա է ուղարկում **կեթոս** կոչված հրեշին. վերջինս սարսափահար է անում բնակիչներին: **Կեթոսը** խորհրդանշում է բնության ուժերը, տվյալ դեպքում՝ երկրաշարժը[41]: Երկրաշարժից հետո քաղաքը կարող էր գրավվել ախայացիների կողմից, ինչը, կարծես, վկայված է նույն ավանդությունում. Լաոմեդոնին նախապես օգնած Հերակլեսը, չստանալով իր ակնկալած վարձատրությունը, գրավում է Տրոյան:

Այսպիսով, ՏՊ-ի պատմականությունն ընդունող մասնագետների մեծ մասը, որը հակված է հոմերոսյան Տրոյան փնտրելու Հիսարլըկի ուշբրոնզեդարյան վերջին փուլի շերտերից մեկում և քաղաքի ավերումը վերագրելու ախայան արշավանքին (մայրցամաքային Հունաստանից կամ կղզիներից), փորձում է լրացուցիչ և ավելի հիմնավոր զուգահեռներ գտնել անտիկ ավանդության և սեպագրական-հնագիտական աղբյուրների միջև, որը թույլ կտա տեղայնացնելու և թվագրելու ՏՊ կոչվող շուրջ երեքհազարամյա խնդիրը:

Ի տարբերություն մասնագետների վերոհիշյալ խմբի, 1980-ական թվականների սկզբներից ՏՊ-ի և դրան առնչվող խնդիրների մեկնաբանության ասպարեզում աստիճանաբար ձևավորվել է բացահայտ ժխտողական միտում, որ սկսվել էր դեռ Ֆ.Զոմմերից[42]: Այս ուղղության կողմնակիցները հենվում են մի շարք փաստարկների վրա, որոնց մի մասը, առաջ անցնելով, կարելի է բնորոշել որպես մտահայեցողական, զուրկ որևէ լուրջ փաստական հիմքից: Դրանք են.

1) Մ.թ.ա. XV-XIIIդդ. խեթական աղբյուրների հիշատակած Ախխիյա կամ Ախխիյավա պետությունը ոչ մի առնչություն չունի մայրցամաքային Հունաստանի կենտրոնների հետ[43]:

2) Խեթական աղբյուրների հիշատակած Վիլուսա (նաև՝ Վիլուսիյա ձևով) և Տարուիսա երկրանունները լեզվական առումով և

տեղադրմամբ կապ չունեն հոմերոսյան Իլիոնի և Տրոյայի հետ[44]:

3) Միկենյան կենտրոնների և Տրոադայի միջև եղած բնական արգելքը (Էգեյան ծովը) քիչ հավանական է դարձնում ախայացիների ակտիվ մասնակցությունը փոքրասիական գործերին[45]:

4) Տրոյա VIIa-ի ավերման պահին միկենցիները չէին կարող խոշոր արշավանք ձեռնարկել Փոքր Ասիա, քանի որ թե՛ միկենյան կենտրոնները, թե՛ Տրոյա VIIa-ն միաժամանակ զոհ են դարձել Թրակիայից ընթացած միգրացիային[46]:

5) Տրոյա VIIa-ի կործանումը պիտի թվագրել XIIդ. 40-30-ական թվականներով կամ քիչ ավելի ուշ շրջանով, այսինքն, միկենյան քաղաքակրթության անկումից մի քանի տասնամյակ անց[47]:

Ստորև ավելի հանգամանորեն ներկայացնենք վերոհիշյալ փաստարկները:

ԱԽԽԻՅԱՎԱ-ՄԻԿԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ ԽՆԴԻՐԸ

Արդյոք խեթական աղբյուրներում հիշատակվող Ախխիյավա երկիրը[48] մայրցամաքային Հունաստանի միկենյան կենտրոնների խեթերի կողմից մի փոքր փոփոխված անվանումն է[49], թե այն կապ չունի միկենյան աշխարհի հետ:

Խեթական սեպագիր տեքստերի ուսումնասիրության սկզբնական փուլում, հենվելով Ախխիյավա երկրանվան և անտիկ ավանդության կողմից միկենյան դարաշրջանի Հունաստանի բնակչության նկատմամբ կիրառվող **Achai(w)oi** ցեղանվան միջև ակնառու նմանության վրա, է.Ֆոռերը առաջարկեց դրանց նույնությունը[50]: Այս տեսակետն ընդունվեց Յ.Ֆրիդրիխի[51], Ա.Գյոթցեի[52], Ֆ.Շախերմեյրի[53] կողմից. հետագայում էլ Ախխիյավա - միկենյան աշխարհ նույնացումը մեծ թվով կողմնակիցներ ունեցավ[54]:

Սակայն արդեն 1932թ. Ֆ.Զոմմերը հանդես եկավ միկենյան տեսության սուր քննադատությամբ[55]: Նրա կարծիքով, խեթական աղբյուրներում պահպանված Ախխիյավային վերաբերող տեղեկությունները ոչ մի հիմք չեն տալիս այն տեղադրելու մայրցամաքային Հունաստանում. հավանաբար, Ախխիյավան արևմտափոքրասիական երկիր պիտի լիներ[56]:

1940-60-ական թվականներին Ախխիյավայի տեղայնացման խնդիրը նոր բանավեճերի առարկա դարձավ: Առաջարկվեցին փոխզիջողական տարբերակներ, որոնց հիմքում էր Փոքր Ասիայից Հարավային Բալկաններ ընկած մեծ տարածության մտայնությունը: Ինչպես կտեսնենք ստորև, XV-XIIIդդ. Ախխիյավան ակտիվ արտաքին քաղաքականություն էր վարում արևմտյան Փոքր Ասիայում, հովանավորելով այստեղի հակախեթական ուժերին: Ըստ այդմ, ենթադրվում էր, որ պելոպոննեսյան ախայացիները հազիվ թե ի վիճակի լինեին լուրջ մրցակցություն ցույց տալու խեթերին հեռավոր Փոքր Ասիայում: Նույնիսկ Ախխիյավան միկենյան աշխարհում փնտրողների մեծ մասը, այնուամենայնիվ, հակված էր ենթադրելու, որ խեթական աղբյուրներում հիշատակվող երկիրը պիտի գտնվեր միկենյան աշխարհի արևմտյան ծայրագավառում, այն է՝ էգեյան ծովի արևելքում ընկած կղզիներում: Մայրցամաքային Հունաստանը, տվյալ պարագայում՝ Պելոպոննեսը թվում էր քիչ հավանական: Պելոպոննեսի, որպես Ախխիյավայի կենտրոնական շրջանի կամ միջուկի դպսին տեսակետը պաշտպանում էին քչերը[57]: Դրա արդյունքում Ախխիյավան սկսեց «թափառել» էգեյան ծովի արևելյան ավազանի ողջ երկայնքով՝ Հռոդոսում[58], Փոքր Ասիայի արևմտյան ծովափին և հարակից կղզիներում[59], Կիպրոսում[60], Կրետեում[61], Բալկանյան Թրակիայում[62] և նույնիսկ Տրոադայում[63]:

Ախխիյավայի փոքրասիական կամ մերձփոքրասիական տեղադրման միտումը ակնհայտորեն խթանվեց 1969թ. հետո, երբ հնագրական հիմքի վրա զգալի թվով խեթական պատմական բնույթի տեքստեր XIIIդ. երկրորդ կեսից վերաթվագրվեցին XVդ. երկրորդ կեսով[64]: Այդ թվում նաև հայտնի «Մադդուվատտասի մեղանչանքը»[65], որտեղ նկարագրվում է «Ախխիյայի մարդու՝ Ատտար(հս)սիյասի կողմից ոմն Մադդուվատտասի փախուստը խեթական արքայի հովանավորության ներքո: Այստեղ ներկայացվում էր թերակղզու արևմուտքում Խեթական պետության համար ստեղծված բավական աննպաստ իրավիճակ՝ խեթերից կախյալ Մադդուվատտասի անհնազանդությունը, նրա հարձակումը խեթական հովանավորության տակ գտնվող Ալասիա-Կիպրոսի վրա, դաշինքը խեթերի դեմ ապստամբած Դալավա քաղաքի (հետագայի Տլոսը՝ Լիկիայում) հետ: Իսկ այս տեքստին համաժամանակյա մեկ այլ տեքստում՝ «Թուդխալիյասի տարեգրությունում»[66] հիշատակվում էր դեպի արևմտյան Փոքր Ասիա՝ Ասսուվա խոշոր միության դեմ արշավանքը: Այս երկու տեքստերի նախկին թվագրումը Թուդխալիյաս IV-ի և Առնուվանդաս III-ի ժամանակներով (XIIIդ. երկրորդ կես) իսկապես կարող էր հանգեցնել Փոքր Ասիայի արևմուտքում Ախխիյավայի կողմից

հովանավորվող հակախեթական ագրեսիվ գործողություններով հագեցած իրավիճակի գոյության մասին ենթադրության: Սա, կարծես, որոշակի հիմք էր ստեղծում ՏՊ-ի իրականության և Ախխիյավա - միկենյան Հունաստան նույնացման համար: Հատկապես, եթե հաշվի առնվեր վաղուց առաջարկված Ատտար(իս)սիյաս-Ատրեոս (ՏՊ-ի հերոս Ագամեմնոնի հայրը) նույնությունը[67]: Եզրակացությունը հետևյալն էր. օգտվելով Փոքր Ասիայի արևմուտքում խեթերի սասանված ազդեցությունից, միկենյան հույները կարող էին ակտիվանալ այս տարածաշրջանում և գրավել մի շարք երկրներ, այդ թվում նաև՝ Տրոյան[68]:

Սակայն վերոհիշյալ տեքստերի վերաթվագրումը XVդ. երկրորդ կեսով շուրջ երկու հարյուր տարի ետ էր տանում այդ իրավիճակը և Ատտարիսիյաս- Ատրեոսին, հետևաբար, նաև կասկածելի էր դարձնում Ախխիյավա - միկենյան Հունաստան կապը:

Բացի խեթական տեքստերի վերաթվագրումից, Ախխիյավայի տեղադրման գործում զգալի դեր խաղացին միկենյան աշխարհի արտաքին կապերի ասպարեզում հնագիտորեն նշմարվող գործընթացները:

Բանն այն է, որ միկենյան խեցեղենի և կենցաղային այլ իրերի արտահանումը արևմտյան Փոքր Ասիա, Լևանտ և Եգիպտոս ծաղկում էր ապրում դեռևս ողջ XIVդ., հատկապես LH IIIA2-ում (XIVդ. վերջ - XIIIդ. սկիզբ), որից հետո սկսվում է նրա կտրուկ անկումը[69]: Այս երևույթի մասին ավելի ուշ, իսկ այժմ այն մասին, թե ինչպես էր մեկնաբանվում նշված փաստը:

Ենթադրվում էր, որ LH IIIB փուլում՝ մ.թ.ա. XIII դարի 80-70-ական թվականներից հետո մայրցամաքային Հունաստանի միկենյան կենտրոններն այնքան էին թուլացել, որ հազիվ թե փորձեին ակտիվություն ցուցաբերել Փոքր Ասիայում: Բնականաբար, այս ժամանակահատվածում հիշատակվող Ախխիյավան չէր կարող մայրցամաքային Հունաստանը լինել (տե՛ս վերը):

Միկենյան ծագման իրերի (գլխավորապես՝ խեցեղեն) առկայությունը արևմտյան Փոքր Ասիայում մինչև վերջին տասնամյակները չի վիճարկվել: Այս տարածաշրջանի ծովափնյա հատվածում հայտնաբերված միկենյան բնակավայրերի, թաղումների, խեցեղենի ու այլ իրերի տեղաբաշխման քարտեզը[70] ինքնին արդեն բավական է, որպեսզի պատկերացում կազմվի մայրցամաքային միկենյան կենտրոնների խաղացած դերի մասին: Այս նյութի զգալի մասը գալիս է Տրոյա-Հիսարլըկից, Միլեթից, Սմիրնայից,Յասոսից և Մյուսգեբիից, ինչպես նաև մայրցամաքից ոչ հեռու գտնվող Հռոդոս, Կոս, Սամոս և Լեմնոս կղզիներից:

Ըստ Կ.Բիտտելի քարտեզի, արևմտյան Փոքր Ասիայից հայտնի միկենյան նյութը երեք տիպի է՝ ա) բնակավայրեր (Պիտանե, Կլազոմենե՝ մայրցամաքում, մեկ բնակավայր Կալիմնոս կղզում, երեքը՝Կոս կղզում, Յալիսոսը և Լինդոսը՝ Հռոդոսում)[71], բ) թաղումներ (Կոլոֆոն, Եփեսոս,Մյուսգեբի, Յալիսոս և Լինդոս), գ) խեցեղեն և այլ իրեր (Սարդես, Սմիրնա, Միլեթ, Յասոս, Միլիաս, Ստրատոնիկեա [ժամանակակից Էսքիհիսար], Տելմեսոս [ժամանակակից ֆեթիե], Անտիյաս և Թերմի՝ Լեսբոս կղզում): Սրան պիտի ավելացնել Տրոյայից հայտնի մեծ քանակությամբ խեցեղենը: Եթե չհաշվենք Տրոյան, ապա Փոքր Ասիայում միկենյան նյութի տարածման հյուսիսային սահմանը Հերմոս գետն է՝ պատմական Միսիայի և Լիդիայի սահմանը (ժամանակակից Գեդիզ): Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ վերոհիշյալ միկենյան նյութը որոշ դեպքերում հայտնաբերվել է լուվիական հիերոգլիֆային արձանագրություններ պարունակող հուշարձանների մոտակայքում (Կարաբել, Սիպիլոս)[72]:

Ինչ վերաբերում է Տրոյային, ապա այստեղ ներկայացված է միկենյան խեցեղենի ամենախոշոր քանակությունը: Ներմուծման սկիզբն է LH II-ը (մոտավորապես 1500թ.); LH IIIA1-ում միկենյան խեցեղենի քանակը կտրուկ աճում է և հասնում իր բարձրակետին մոտավորապես 1425-1375թթ. ընթացքում: Ուշագրավ է, որ այս նույն ժամանակահատվածում նման երևույթ է նկատվում նաև Կրետեում, Հռոդոսում և արևմտյան Փոքր Ասիայի մյուս ծովափնյա շրջաններում[73]: Ինչպես կտեսնենք ստորև, միկենցիների ակտիվությունը չէր սահմանափակվում միայն առևտրով. այն ուղեկցվում էր նաև քաղաքական էքսպանսիայով:

Ի վերջո, Փոքր Ասիայում միկենցիների բազմաբնույթ գործունեության օգտին կարելի է բերել ևս մեկ փաստարկ: Պիլոսից (Մեսսենիա) հայտնի «Գծային Բ» գրով գրված աղյուսակներում (XIII դար) կան արքայական և տաճարային տնտեսություններում աշխատող փոքրասիական ծագման ստրկուհիների և երեխաների գոյությունը հաստատող տվյալներ: Օրինակ, հիշատակվում են **Ki-ni-di-ja-o = knidiai** «(կարիական) Կնիդոսից», **mi-ra-ti-ja = Milatiai** «Միլեթից», **ze-pu -ra = Zephur(i)ai** «Զեֆյուր(ի)այից» (Հալիկառնասի հին անվանումը)»[74]:

Ինչպես կարելի է մեկնաբանել արևմտյան Փոքր Ասիայում միկենցիների ակտիվ ներկայությունն ապացուցող համեմատաբար առատ նյութը և դրա կրճատումը ոչ միայն այստեղ (այդ թվում նաև՝ Հռոդոսում), այլև լևանտյան կենտրոններում: Եթե XIIIդ. միկենյան արտահանումը կտրուկ անկում է ապրել, իսկ նույն դարի առաջին կեսին Ախխիյավան խիստ ակտիվ էր արևմտյան Փոքր Ասիայում, ապա

որքանով է նպատակահարմար այս փաստն ընդունել որպես վկայություն Ախխիյավա - միկենյան աշխարհ նույնացման դեմ:

Թվում է, որ Ախխիյավան ամեն կերպ Փոքր Ասիայի արևմուտքում կամ մերձավորությամբ (օրինակ, էգեյան ծովի արևելքի կղզիներում կամ Բալկանյան թրակիայում) տեղադրողները ելնում են ոչ այնքան գերքննադատական մոտեցման դիրքերից, որքան էգեյան ծովի «պատնեշի» գործոնը գերագնահատելու պատճառով և որոշ այլ փաստարկների ճնշման տակ, ինչի մասին ավելի ուշ: Այնինչ, անկանխակալ մոտեցման դեպքում խնդիրն այնքան բարդ չի թվում, որքան այն ներկայացվում է: Ստորև տեսնենք, թե ինչպես կարելի է բացատրել միկենյան արտաքին առևտրի անկման փաստը, և թե հնարավոր է արդյոք դրա աղերսները գտնել գրավոր աղբյուրներում: Այդ նպատակով ի մի բերենք նախ արևմտյան Փոքր Ասիայում Ախխիյավայի խաղացած դերը, վեր հանելով դրա հիմնական միտումները: Այնուհետև միայն փորձենք վերլուծել միկենյան կենտրոնների արտաքին կապերի խնդիրը:

ԱԽԽԻՅԱՎԱՆ ԽԵԹԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Ախխիյավայի վերաբերյալ գոյություն ունեցող խեթական աղբյուրները մեզ են հասել խեթական չորս արքաների կառավարման ժամանակաշրջանից՝ Առնուվանդաս I, Մուրսիլիս II, Խաթթուսիլիս III և Թուդխալիյաս IV: Ներկայացնենք այս արքաների կողմից Ախխիյավան հիշատակող տեքստային նյութը՝ դրա համառոտ գնահատականով:

Առնուվանդաս I. XVդ. երկրորդ կեսով վերաթվագրված «Մադդուվատտասի մեղանչանքը» պայմանական անունը կրող տեքստը Խաթթիի արևմտափոքրասիական կախյալ կառավարիչ Մադդուվատտասին ուղղված մի նամակ է, գրված Առնուվանդաս I-ի կողմից: Այստեղ երկու ենթատեքստերում հիշատակվում է «ախխիյացի» Ատտար(իս)սիյասը՝ արևմտյան Փոքր Ասիայում և Ալասիայում ձեռնարկած գործողությունների առնչությամբ: Ստորև բերվող հատվածին նախորդող տողերում խոսվում է այն մասին, որ

ինչ-որ մի ժամանակ Մադդուվատտասը վտարվել է Ատտար(իս)սիյասի երկրից և, ապաստանելով խեթական արքայի հոր՝ Թուդխալիյաս II-ի մոտ, շուտով նրանից ստացել է Ցիպպասլա լեռան երկիրը, դառնալով կախյալ կառավարիչ: Նրա պարտավորությունների մեջ էր մտնում որևէ կապ չունենալ Ատտար(իս)սիյասի հետ: Մինչև բուն «մեղանչանքները», Մադդուվատտասը անհաջող հարձակման փորձ էր կատարել խեթերի հակառակորդ Արցավայի վրա, և միայն խեթական զորքի օգնությամբ փրկվել:

«Այնուհետև ախխիյացի Ատտար(իս)սիյան եկավ և մտադրվեց սպանել քեզ, Մադդուվատտա: Բայց երբ Իմ Արևի հայրը լսեց (այս մասին), նա ուղարկեց Կիսնապիլիին, զորք և մարտակառքեր՝ կռվելու Ատտար(իս)սիյայի դեմ: Իսկ դու, Մադդուվատտա, չդիմադրեցիր Ատտար(իս)սիյային և փախար նրանից [.....]: Կիսնապիլին կռիվ տվեց Ատտար(իս)սիյային: Եվ Ատտար(իս)սիյայի կողմից 100 մարտա [կառք և ... հետևակ եկավ մարտադաշտ]: Նրանք մարտի բռնվեցին (մեկը մյուսի հետ) և նրանք (խեթերը - Ա.Ք.) սպանեցին մեկ ազնվականի Ատտար(իս)սիյայի կողմից, և մեր կողմից նրանք (թշնամիները - Ա.Ք.) սպանեցին մեկ ազնվականի՝ Ցիդանցային: Եվ Ատտար(իս)սիյան հրաժարվեց (իր հարձակումից) Մադդուվատտայի վրա և վերադարձավ իր երկիրը: Եվ նրանք (խեթական զորքը - Ա.Ք.) վերականգնեցին Մադդուվատտային իր կախյալ վիճակում»[75]:

Հաջորդ հիշատակությունը.

«Քանի որ Ալասիան պատկանում է Իմ Արևին, [դու ինչու՞ ես գրոհել այն]», դիմում է Առնուվանդասը Մադդուվատտասին: «Երբ Ատտար(իս)սիյասը և պիգգայացին ասպատակում էին Ալասիան, ես էլ ասպատակեցի: Ո՛չ քո հայրը, ո՛չ էլ Քո Արևը երբևէ չեն դիմել ինձ (ասելով) «Ալասիան իմն է: Ճանաչիր այն որպես այդպիսին»: Այժմ, երբ Քո Արևը ցանկանում է վերադարձնել Ալասիայից գերվածներին, ես նրանց կվերադարձնեմ քեզ»: Առնուվանդասի պատասխանը. «Քանի որ Ատտար(իս)սիյասը և պիգգայացին Իմ Արևից անկախ են, իսկ դու, Մադդուվատտա, իմ ենթական ես, ապա ինչու՞ դու միացար նրանց»[76]:

Տեքստում շարադրված են Թուդխալիյաս II-ի և Առնուվանդաս I-ի օրոք տեղի ունեցած իրադարձությունները, որոնց ընթացքը հետևյալն է:

<u>Թուդխալիյաս II.</u> «Ախխիյացի» Ատտար(իս)սիյասը իր երկրից վտարում է Մադդուվատտասին, որը, փախչելով Փոքր Ասիա՝ խեթական տիրույթներ, դառնում է խեթական տարածք հանդիսացող Ցիպպասլայի կառավարիչ: Ինչ-որ ժամանակ անց Ատտար(իս)սիյասը զորքով մտնում է Ցիպպասլա: Չկարողանալով դիմադրել, Մադդուվատտասը

Н 84138

փախչում է և միայն խեթական զորքի առաջխաղացման շնորհիվ հարձակվողները նահանջում են և Մադդուվատտասը վերականգնվում է իր երկրում:

Առնուվանդաս I. Ատտար(իս)սիյասը և «պիգգայացին» հարձակվում են Ալասիայի վրա: Նույնը կատարում է նաև Մադդուվատտասը: Վերջինիս արարքն առաջ է բերում Առնուվանդասի դժգոհությունը, քանի որ Ալասիան, ըստ նրա, խեթական տարածք էր:

«Մադդուվատտասի մեղանչանքի» վերը բերված հատվածները, ինչպես ենթադրվում է, դժվար թե վկայեն մայրցամաքային Հունաստանի միկենյան որևէ պետության հետ Ախխիյայի նույնացման օգտին: Վերջինս ավելի շուտ կարելի է մեկնաբանել որպես էթնիկոն, այլ ոչ քաղաքական միավոր: Հավանաբար, Ատտար(իս)սիյասը արևմտյան Փոքր Ասիայում կամ հարակից կղզիներում գործող միկենցի է եղել[77]: Ինչևէ, Ատտար(իս)սիյասի երկիրը բավական զգալի ռազմական ներուժ պիտի ունենար, որպեսզի կարողանար 1) արևմտյան Փոքր Ասիայում խեթերի դեմ ճակատամարտում մարտադաշտ հանել 100 մարտակառք և 2) ծովային արշավանք(ներ) ձեռնարկել Ալասիայի վրա:

Մեր խնդրի առնչությամբ կարևորը ոչ այնքան Ատտար(իս)սիյասի երկրի տեղադրությունն է, որքան վերոհիշյալ իրադարձությունների և արևմտյան Փոքր Ասիայում միկենյան մշակույթի ներկայության ակտիվացման միջև եղած ժամանակագրական կապը՝ LH II - LH IIIA1 անցման փուլը:

Մուրսիլիս II. Ախխիյավան հիշատակվում է այս արքայի տարեգրություններում.

«Եվ երբ գարուն էր, քանի որ Ուխ[խացիտին միացավ Ախխիյավայի արքային], և Միլլավանդա երկիրը [անցավ] Ախխիյա[վայի] արքային, ես ուղարկեցի Գուլլային և Մալացիտիին, հետևակ և մար[տակառքեր, և նրանք] ավերեցին [Միլլավանդա երկիրը]»[78]:

«... Այն ժամանակ ... ես ընթացա դեպի Արցավա ... Եվ Ուխխացիտին չդիմադրեց ինձ: Նա փախավ իմ առջևից և ծովով գնաց կղզիներ: Եվ այնտեղ նա մնաց»[79]:

Երկու տեքստերն էլ պատմում են միևնույն իրադարձության մասին, որը տեղի է ունեցել Մուրսիլիս II-ի կառավարման երրորդ տարում (մոտավորապես 1320թ.): Արցավան ապստամբել և դաշինք էր կնքել Ախխիյավայի հետ, որից հետո Միլլավանդան գրավվել էր վերջինիս կողմից կամ կամավոր կերպով անցել էր նրա տիրապետության տակ: Խեթերի կողմից Միլլավանդայի գրավումից

հետո Արցավայի ապստամբ արքան հեռացել էր ինչ-որ կողմներ, ենթադրաբար, Ախխիյավային պատկանող տարածք[80]: Ի տարբերություն «Մադդուվատտասի մեղանչանքի», այստեղ հանդես է գալիս ոչ թե «ախխիյացի» առանց տիտղոսների, այլ «Ախխիյավայի արքան»: Բացի այդ, նշվում է, որ Ախխիյավայի(՞) տիրապետության տակ էին գտնվում ինչ-որ կողմներ :

Վերոհիշյալ իրադարձությունը վկայում է այն մասին, որ նախքան Արցավայի ապստամբությունը, Միլլավանդան հանդիսացել է խեթական տարածք: Ախխիյավայի փորձը վերահսկողություն հաստատելու քաղաքի վրա անհաջողությամբ է ավարտվել:

Մուվատալլիս II. Այս արքայի տեքստերում Ախխիյավան անվանապես չի հիշվում, սակայն դրանցից երկուսը՝ «Մանապա-թարխունտասի նամակը»[81] և «Ալաքսանդուսի դաշնագիրը»[82] հստակ տեղեկություններ են հաղորդում արևմտյան Փոքր Ասիայում Ախխիյավայի կողմից հովանավորվող հակախեթական ելույթների մասին: Դրանցից առաջինը Սեխա գետի երկրի արքայի՝ Մանապա-թարխունտասի նամակն է խեթական արքային:

«Նամակի» թվագրումը Մուվատալլիսի շրջանով լուրջ բանավեճի առարկա է: Նրանք, ովքեր այս տեքստը թվագրում են Խաթթուսիլիս III-ի ժամանակով[83], կարևոր փաստարկ են համարում այնտեղ Պիյամարադուսի և Ատպասի հիշատակությունը, կապված այս անձանց հակախեթական գործունեության հետ, որը հայտնի է Խաթթուսիլիսի կողմից Ախխիյավայի արքային հղված «Տավագալավասի նամակից» (տե՛ս ստորև):

«Նամակի» թվագրումը Մուվատալլիսի շրջանով հենվում է Թուդխալիյաս IV-ի և Ամուրրուի արքա Սաուսգամուվայի միջև կնքված դաշնագրի այն հատվածի վրա, ըստ որի Մանապա-թարխունտասի որդի Մաստուրիսին (Սեխայի հաջորդ արքան) Մուվատալլիսն է ամուսնացրել իր քրոջ՝ **Maššana-IR-iš**-ի հետ[84]: Այս երկրորդ ենթադրության օգտին է վկայում նաև տեքստի մեկ այլ հատված, ըստ որի Մաստուրիսը Ուրխի-թեշուբի և Խաթթուսիլիսի միջև ընթացած գահակալական պայքարի ժամանակ հարել է վերջինիս[85]: Սրանից կարծես հետևում է, որ նշված ժամանակաշրջանում (մոտավորապես 1272-1265թթ.) Մաստուրիսն արդեն փոխարինել էր հորը Սեխայի գահին: «Նամակի» վաղ թվագրման օգտին են վկայում, թերևս, որոշ այլ փաստարկներ ևս[86]:

«Նամակի» տեքստի՝ մեզ հետաքրքրող հատվածը բավական տուժած է, այդ իսկ պատճառով շարադրենք դրա համառոտ բովանդակությունը:

Սեխայի արքան հայտնում է ոմն Պիյամարադուսի կողմից Վիլուսայի, Լացպայի (Լեսբոս) և Սեխայի (գուցե նաև՝ Միրայի) վրա ձեռնարկած հարձակումների մասին: Ասվում է նաև, որ Պիյամարադուսը Մանապա-թարխունտասին դրել է Ատպասի ենթակայության տակ: Այնուհետև, Սեխայի արքայի բոլոր ստորադրյալները, ինչպես նաև խեթական արքայի ենթակաները արևմուտքում լեզու են գտել Պիյամարադուսի հետ:

Այս տեքստից բխող ենթադրությունների և Պիյամարադուս-Ատպաս զույգի գործունեության մասին հաջորդ ենթաբաժնում:

Խաթթուսիլիս III. Ախխիյավան հիշատակվում է Խաթթուսիլիսի կողմից Ախխիյավայի արքային գրված «Տավագալավասի նամակում»[87]: Ներկայացնենք մի հատված.

«Բայց երբ [իմ եղբոր լրաբերը] ժամանեց իմ ճամբար, նա ինձ [ողջույն] չբերեց և [չբերեց] ընծաներ, բայց խոսեց [այսպես]. «Նա (Ախխիյավայի արքան - Ա.Ք.) գրել է Ատպասին (ասելով). «Պիյամարադուսին դիր Խաթթիի արքայի ենթակայության տակ»: Այնժամ ես գնացի [դեպի] Միլլավանդա ...: Բայց Պիյամարադուսը նավով փախավ: Ավայանասը և Ատպասը լսեցին իմ մեղադրանքները, որ ունեի նրա (Պիյամարադուսի - Ա.Ք.) դեմ: Այժմ, քանի որ նա նրանց (Ավայանասի և Ատպասի - Ա.Ք.) հոգեհայրն է, ինչու են նրանք թաքցնում դեպքը: Ես նրանցից երդում վերցրի, և այդպիսով նրանք պիտի քեզ ճշմարտությունն ասեն»[88]:

Այնուհետև տեքստում խոսվում է այն մասին, որ Ախխիյավան շարունակաբար հովանավորել է Խաթթուսիլիսի երկիրն ասպատակող Պիյամարադուսին, իսկ երբ խեթական փորձել է պատժել իրենից կախյալ այդ անձնավորությանը, վերջինս ամեն անգամ ապաստան է գտել Ախխիյավայում: Խաթթուսիլիսը ձգտում է համոզել Ախխիյավայի արքային, որպեսզի նա Խաթթի վերադարձնի Պիյամարադուսին:

Փորձենք ի մի բերել Մուվատալլիս II-ի և Խաթթուսիլիս III-ի օրոք արևմուտքում ստեղծված քաղաքական իրավիճակը:

1) Մուվատալլիսի կառավարման շրջանում, հնարավոր է, խեթա-եգիպտական պատերազմի նախօրեին կամ նույնիսկ քիչ անց, արևմտյան Փոքր Ասիայում նախկինում խեթերից կախյալ ինչ-որ կառավարիչ՝ Պիյամարադուսը, քայքայիչ գործունեություն է ծավալել, հարձակումներ գործելով խեթահպատակ Վիլուսայի, Սեխայի (և Միրայի՞) վրա: Պիյամարադուսը և նրա հոգեզավակները ախխիյավցիներ չէին, այլ տեղական կառավարիչներ, որոնք ակնհայտորեն վայելում էին Ախխիյավայի արքայի հովանավորությունը: Սեխան կախման մեջ էր դրվել Պիյամարադուսի

հոգեզավակ Ատպասից, որը Միլլավանդայի կառավարիչն էր[89]: Այս իրադարձությունների ընթացքում, օգնություն չստանալով խեթական արքայից, Մանապա-թարխունտասը ստիպված էր եղել ապաստան գտնել Խաթթիում, լքելով իր երկիրը. նույն Մուվատալլիսի կամ, ավելի հավանական է, Ուրխի-թեշուբի օրոք նա իր որդու՝ Մաստուրիսի հետ վերադարձել էր Սեխա[90]:

2) Խաթթուսիլիս III-ը փորձում է համաձայնության գալ Ախխիյավայի արքայի հետ՝ Պիյամարադուսի հարցում: Նա պատրաստ է նույնիսկ ներել վերջինիս և տիրույթներ տրամադրել, ընդ որում հաշվի առնելով Պիյամարադուսի ցանկությունը[91]:

3) Այնուամենայնիվ, Խաթթուսիլիսը պասսիվ դիտորդի դերում չէ: Նա բազմիցս արշավանքներ է ձեռնարկում դեպի արևմուտք, ստիպելով Պիյամարադուսին հեռանալու Ախխիյավա, իսկ «Նամակը» գրելու նախօրեին նույնիսկ մուտք է գործում վերջինիս գլխավոր հենակետ Միլլավանդա, հավանաբար, ոչ Ատպասի կամ Ախխիյավայի արքայի հրավերով:

4) Ախխիյավայի արքային Խաթթուսիլիսը դիմում է որպես հավասար կարգավիճակ ունեցող կառավարչի («Իմ եղբայր»): Այս պարագան անհնար է անտեսել Ախխիյավայի տեղայնացման հարցում: Նման դիմելաձևը վկայված է Խաթթիի արքաների պաշտոնական գրագրության մեջ միայն չորս երկրների արքաների առնչությամբ՝ Եգիպտոսի, Ասորեստանի, Միտաննիի և Բաբելոնի[92]:

Արևմտյան Փոքր Ասիայում Մուվատալլիս II-ի և Խաթթուսիլիս III-ի օրոք Ախխիյավայի կողմից հովանավորվող հակախեթական անջատողական ուժերի գործունեությունը, այնուամենայնիվ, չի կարելի գերագնահատել, ենթադրելով այստեղ խեթական տիրապետության հիմքերի սասանում[93]: Այստեղ Պիյամարադուսի և այլոց ժամանակավոր հաջողությունները ավելի շուտ պիտի բացատրել նշված ժամանակահատվածի ընթացքում նախ «եգիպտական խնդրի» լուծման անհրաժեշտությամբ (Քադեշի ճակատամարտը և խեթա-եգիպտական դաշնագիրը), այնուհետև Ուրխի-թեշուբի և Խաթթուսիլիսի գահակալական պայքարով: Մի որոշ ժամանակ Խաթթուսասի կառավարիչները կարող էին ստիպողաբար թուլացնել հսկողությունը արևմտյան ծայրագավառային տիրույթների նկատմամբ: Ինչպես կտեսնենք ստորև, Խաթթուսիլիսի հաջորդի՝ Թուդխալիյաս IV-ի օրոք արևմուտքում իրավիճակը զգալիորեն փոխվում է հօգուտ Խաթթիի:

Թուդխալիյաս IV. Այս արքայի մի տեքստում[94] Ախխիյավան կրկին անգամ հանդես է գալիս որպես քաղաքական գործոն Փոքր Ասիայի արևմուտքում:

«[Այսպես է ասում թաբարնա Թուդխալիյասը, Մեծ Արքան. Սեխա գետի երկիրը երկրորդ անգամ մեղանչեց: [Նրանք ասացին(՞). «Անցյալում(՞) Արևի (խեթական արքայի - Ա.Ք.) նապա(՞)պ]ապը չի գրավել մեզ զենքի ուժով: [Արևի պապը] նվաճեց մեզ, բայց մենք ջնջեցինք(՞) նրա համար մեղանչանքը»: [Այնուհետև Թարխունարադուն] պատերազմ ծավալեց և հույսը դրեց Ախխիյավայի արքայի վրա: [Եվ] նա ապաստանեց [Բազեի լեռան վրա]: Բայց ես, Մեծ արքան, ընթացա [և ...] և գրավեցի Բազեի լեռը: Եվ 500 ձիեր [և ... զինվորներ] ես բերեցի [տուն՝ Խաթթի], և Թարխունարադուին իր կանանց, [երեխաների, նրա բարիքների(՞)...] հետ ես ուղարկեցի [...] և տարա Արինննա՝ Արևի աստվածուհու քաղաքը: [Երբեք], Լաբարնայի [օրերից սկսած], ոչ մի Մեծ արքա չէր գնացել (այդ) երկիրը: Ես Մու[վավալվիի] ժառանգին՝ [... Սեխա գետի երկրում] արքա դարձրի [...]»:

Ի տարբերություն Խաթթուսիլիս III-ի օրոք տիրող իրավիճակի, այժմ արդեն խեթական արքան չի փորձում որևէ բանակցություն վարել իր կախյալ կառավարչի կամ նրա հովանավոր Ախխիյավայի արքայի հետ: Տեքստը թույլ է տալիս հանգելու մի շարք հետևությունների.

1) Հավանաբար, Սեխայի խեթամետ արքա Մանապա-թարխունտասի իշխանությունը չէր ավարտվել՝ գահազրկմամբ: Համենայնդեպս, դեռ Թուդխալիյաս IV-ի կառավարման սկզբին (ըստ «Բրոնզե տախտակի») Սեխայի արքան Մաստուրիսն էր՝ Մանապա-թարխունտասի որդին[95]: Սա վկայում է Պիյամարադուսի գործունեության ընթացքում Խաթթիի նկատմամբ Սեխայի հավատարմության օգտին:

2) Թուդխալիյասի հարձակման արդյունքում Սեխան պարտվել էր, իսկ Թարխունարադուն գերվել և ուղարկվել էր Խաթթի: Ախխիյավայի արքան չէր փորձել կամ հաստատել օգնել իր դաշնակցին[96]:

3) Թարխունարադուի կողմից Սեխայում իշխանության անցնելը պիտի տեղի ունենար Թուդխալիյասի կառավարման շրջանում, անկասկած, ոչ առաջին տարիներին, քանի որ «Բրոնզե տախտակում» Սեխայի արքան դեռ Մաստուրիսն էր: Թարխունարադուի գահակալումը պիտի տեղի ունենար Մաստուրիսից հետո: Եթե նկատի ունենանք, որ Մաստուրիսն անժառանգ էր[97], ապա հնարավոր է ենթադրել, որ Թուդխալիյասի և Կուրունտայի միջև կնքված պայմանագրից որոշ ժամանակ անց, օգտվելով գահաժառանգի բացակայությունից և հենվելով Ախխիյավայի աջակցության վրա, Սեխայի անջատողական ուժերը կարող էին հեղաշրջում կազմակերպել:

4) Այս և Թուդխալիյասի մեկ այլ տեքստի՝ «Միլավատայի նամակի»[98] նյութի համադրումը թույլ է տալիս ենթադրելու, որ ա)

խեթերին հաջողվել էր անցնել վճռական հարձակման արևմուտքում, որի ընթացքում վերահպատակեցվել էին Սեխան, Վիլուսան և Միլլավանդան, բ) Ախխիյավայի արքան անկարող էր եղել միջամտելու փոքրասիական գործերին:

ԱԽԽԻՅԱՎԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ. ՊԱՏՄԱ-ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՏՆԱԽՈՐՔ

Այժմ փորձենք ի մի բերել արևմտյան Փոքր Ասիայում Ախխիյավայի խաղացած դերը, վեր հանելով խեթա-ախխիյավյան փոխհարաբերությունների փուլերը: Վերլուծության արդյունքների համադրումը Փոքր Ասիայում միկենյան մշակութային աշխարհի ներկայությունը հավաստող հնագիտական նյութի նման պարբերացման արդյունքների հետ, անկասկած, կարող է զգալիորեն մոտեցնել Ախխիյավա - միկենյան Հունաստան և ՏՊ-ի խնդիրների լուծումը:

Խեթական աղբյուրները թույլ են տալիս ներկայացնելու Փոքր Ասիայում Ախխիյավայի վարած քաղաքականության հետևյալ փուլերը.

1) Մ.թ.ա. XVդ. երկրորդ կես - «Ախխիյացի» Ատտար(իս)սիյասի հարձակումը Փոքր Ասիայի Ցիպպասլա երկրի խեթահպատակ կառավարիչ Մադդուվատտասի վրա, ճակատամարտ խեթական զորքի դեմ, Ատտար(իս)սիյասի ծովային արշավանքը դեպի Ալասիա:

2) Մ.թ.ա. XIVդ. վերջին քառորդ - Ախխիյավայի և արևմտյան Փոքր Ասիայում Խաթթիի գլխավոր հակառակորդ Արցավայի դաշինքը, Միլլավանդա-Միլեթի նկատմամբ Ախխիյավայի ժամանակավոր վերահսկողության հաստատումը մինչև Մուրսիլիսի կողմից քաղաքի նվաճումը:

3) Մ.թ.ա. XIIIդ. 80-60-ական թվականներ - Ախխիյավայի քաղաքական ակտիվության բարձրակետ, որն արտահայտվում էր արևմտափոքրասիական հակախեթական տարրերի հովանավորությամբ, վերջիններիս (Պիյամարադուս, Ատպաս, Ավայանաս) միջոցով այս տարածաշրջանի խեթամետ երկրների նվաճումով, Ախխիյավայի և Խաթթիի փոխհարաբերությունների

աննախադեպ լարում, խեթական զորքերի մի շարք փորձեր շտկելու իրավիճակը արևմուտքում, Վիլուսայի և Լացպայի գրավումը Պիյամարադուսի կողմից: Առաջին անգամ Ախխիյավայի արքան Խաթթուսիլիսի կողմից դիտվում է որպես իրեն հավասար կարգավիճակ ունեցող արքա:

4) Մ.թ.ա. XIIIդ. 50-40-ական թվականներ - Ախխիյավայի փոքրասիական քաղաքականության աստիճանական անկում, որի ուղղակի արտահայտությունը Թուդխալիյաս IV-ի հաջող ձեռնարկումներն էին Ախխիյավայի գլխավոր հենակետ Միլլավանդայի հարցում, ինչպես նաև Սեխայի ախխիյավամետ արքա Թարխունարադուի գերևարումը և այստեղ խեթամետ արքայի՝ Մուվավալվիի որդու գահակալումը, Թուդխալիյասի ծրագիրը Վիլուսայի գահին վերահաստատելու ինչ-ինչ պատճառներով իր երկրից վտարված Վալմուին, Ախխիյավայի տնտեսական շրջափակումը («Սաուսգամուվայի դաշնագիրը»):

Այսպիսով, շուրջ երկու դար տևած խեթա-ախխիյավյան փոխհարաբերություններում առանձնանում են երկու հիմնական միտումներ. 1) Ախխիյավայի քաղաքական ակտիվության աստիճանական աճ, բարձրակետը՝ Խաթթուսիլիս III-ի օրոք, 2) ակտիվության թուլացում և, հավանաբար, ավարտ, կապված Թուդխալիաս IV-ի ռազմական և դիվանագիտական գործողությունների հետ:

Իսկ այժմ անդրադառնանք խնդրի հնագիտական ասպեկտին:

1) Մ.թ.ա. XVդ. - XIIIդ. սկիզբ - Միկենյան ծագման բազմաթիվ իրերի մուտք արևմտյան Փոքր Ասիայի ծովափնյա շրջաններ և հարակից կղզիներ, միկենյան բնակչության առկայություն որոշ բնակավայրերում (Միլեթ, Պիտանե, Կլազոմենե): Այս ժամանակահատվածը ընկնում է LH II և LH IIIA փուլերի մեջ: Հայտնի է, որ միկենյան արտաքին առևտուրը Մերձավոր Արևելքի երկրների հետ առավել բարձր զարգացման է հասել հենց այս շրջանում. նույն պատկերն է տիրում նաև Լևանտում:

2) Մ.թ.ա. XIIIդ. երկրորդ կես - Որոշ վայրերում այս փուլը սկսվում է ավելի վաղ: Նկատվում է ներմուծման կտրուկ անկում, որի պատճառները դեռևս այնքան էլ պարզ չեն: Ոմանք դա բացատրում են միկենյան հասարակության ներսում սկսված տնտեսական համակարգի և քաղաքական կառույցի խարխլմամբ[99], մյուսները՝ լևանտյան մրցակիցների (Կիպրոս, Ուգարիտ, կիլիկյան քաղաքներ) հակազդեցությամբ[100]: Այս երևույթի ակնառու արտացոլումներ պիտի համարել XIIIդ. երկրորդ կեսին Պելոպոննեսում և որոշ այլ շրջաններում վկայված քաղաքական անկայունության նշանները, արևելյան

էգեիդայում պարզորոշ նկատվող բնակավայրերի և թաղումների քանակի նվազումն ու բնակչության տեղաշարժերը[101]: Այս ժամանակաշրջանում լևանտյան բնակավայրերում հայտնաբերված միկենյան IIIB խեցեղենը արդեն ներմուծովի չէ, այլ պատրաստված է տեղում՝ տեղական կավից: Այսինքն, կապը մայրցամաքային Հունաստանի և Մերձավոր Արևելքի երկրների հետ էականորեն փոխվում է:

Եվ այսպես, հնագիտական նյութը հանգեցնում է միկենյան աշխարհի և արևմտյան Փոքր Ասիայի՝ երկրների փոխհարաբերություններում տրամագծորեն հակառակ երկու փուլերի գոյության մասին եզրակացության. 1) սերտ փոխհարաբերություններ (XV-XIIIդ. սկիզբ), 2) կապերի կտրուկ նվազում կամ նույնիսկ խզում (XIIIդ. երկրորդ կես):

Անհնար է չնկատել, որ Ախխիյավայի վերաբերյալ խեթական աղբյուրների հաղորդած տեղեկությունները ընդհանուր առմամբ ժամանակագրորեն լիովին համապատասխանում են միկենյան աշխարհի արտաքին կապերի՝ հնագիտորեն վերականգնվող իրավիճակին: Հազիվ թե հնարավոր լինի վիճարկել վերոհիշյալ փուլերի առկայությունը և համապատասխանությունը:

Փորձենք խնդիրը ներկայացնել հակառակ կողմից: Ենթադրենք, որ Ախխիյավան միկենյան կենտրոններից որևէ մեկը չէ (ասենք՝ հեգեմոնը), այլ Հյուսիսային Բալկաններում կամ էգեյան ծովի արևելքում (կղզիներում կամ Փոքր Ասիայի արևմտյան ափին) գտնվող ինչ-որ քաղաքական միավոր: Այդ դեպքում անհրաժեշտ կլինի 1) հայտնաբերել այդ պետության մշակույթի հուշարձանները Փոքր Ասիայում, առաջին հերթին՝ Միլեթում (եթե Ախխիյավան գտնվեր Ասիայում, առաջին հերթին՝ Բալկաններում՝ Թրակիայում)[102], 2) արևմտյան Փոքր Ասիայում տեղադրել մի այնպիսի հզոր պետություն, որը կարող էր երկար տասնամյակների ընթացքում խեթերի հետ վիճարկել տարածաշրջանի նկատմամբ վերահսկողության առաջնությունը, մի պահ նույնիսկ Ախխիյավայի արքան պիտի խեթական արքային հավասար կարգավիճակ ունենար, 3) բացատրել Ախխիյավայի արքայի ֆիզիկական բացակայությունը Փոքր Ասիայում խեթա-ախխիյավյան ռազմական և դիվանագիտական փոխառնչությունների ընթացքում[103], և, վերջապես, 4) ավելի հիմնավոր փաստարկներով ժխտել Ախխիյավա և հունական **Achai(w)oi** տերմինների ակնհայտ նմանությունը[104]:

Եզրափակելով Ախխիյավա - միկենյան Հունաստան հարաբերակցության բաժինը, անհրաժեշտ է նշել հետևյալը: Չնայած այսօր գոյություն ունեցող տվյալները, թվում է, վկայում են Ախխիյավան Հարավային Բալկաններում տեղադրելու օգտին, սակայն խնդիրը

դրանով չի կարելի լուծված համարել: Խոսքը այդ տերմինի տակ հասկացվող էթնոքաղաքական միավորի ճշգրտման մասին է: Կարո՞ղ էր արդյոք մայրցամաքային Հունաստանում գոյություն ունենալ ռազմաքաղաքական զգալի ներուժ ունեցող պետություն, որն ի վիճակի լիներ շուրջ մեկ դար (XIVդ. կեսերից մինչև XIIIդ. կեսերը), ժամանակ, առ ժամանակ հաջողությամբ միջամտելու փոքրասիական գործերին:

Միկենյան աշխարհի քաղաքական կառուցվածքի վերաբերյալ գերիշխում է այն տեսակետը, որ խոսք չի կարող լինել միասնական պետականության մասին[105]: Առկա բազմաբնույթ աղբյուրները (Հոմերոսից մինչև Հունաստանի առանձնահատուկ բնակլիմայական պայմանները) ենթադրում են բազմաթիվ մանր, ինքնուրույն քաղաքական միավորների գոյություն: Վերջիններս կարող էին, ժամանակ առ ժամանակ, արտաքին վտանգի կամ ռազմական և տնտեսական մեծ ձեռնարկումների դեպքում ստեղծել ժամանակավոր անկայուն միություններ, միավորվելով այնպիսի պետությունների շուրջը, ինչպիսին Հոմերոսի նկարագրած Միկենքն էր: Բացի նման խոշոր միությունից, ենթադրվում է քիչ թե շատ կայուն, ավելի փոքր միությունների առկայություն, ինչպես Արգոլիդան (Միկենք կենտրոնով), Բեոտիան (Թեբե կենտրոնով), Ատտիկան (Աթենք կենտրոնով)[106]: Ասվածը թույլ է տալիս ենթադրելու նման դաշինքի գոյություն Փոքր Ասիայում Ախխիյավայի ակտիվության շրջանում. հազիվ թե սահմանափակ ռեսուրսներ ունեցող միկենյան որևէ կենտրոն ի վիճակի լիներ նման հեռահար ձեռնարկումներ կազմակերպելու: Խաթթուսիլիս III-ի օրոք Ախխիյավայի արքայի բարձր կարգավիճակն ինքնին արդեն ենթադրում է Միկենքի կամ մեկ այլ միկենյան կենտրոնի բավական երկարատև գերակայություն մի շարք մայրցամաքային իշխանությունների և էգեյան ծովի որոշ կղզիների նկատմամբ:

Այժմ միկենամերժ տեսության մյուս փաստարկների մասին:

ՎԻԼՈՒՍԱ-ԻԼԻՈՆ ԵՎ ՏԱՐՈՒԻՍԱ-ՏՐՈՅԱ ԽՆԴԻՐԸ

ՏՊ-ի հավաստիության հարցը որոշակիորեն կախված է հոմերոսյան Տրոյա-Իլիոնի՝ խեթական աղբյուրներում վկայված լինել-չլինելու հանգամանքից:

Տրոյա-Իլիոն զույգի խեթական տարբերակների գոյությունը առաջարկվել է դեռ մեր դարի 20-ական թվականներին: Է.Ֆոռերի ենթադրությունը խեթական Տարուիսայի և Տրոյայի, ինչպես նաև Իլիոնի հետ խեթական Վիլուսա/Վիլուսիյայի նույնության մասին ընդունվեց շատերի կողմից[107]: Այս համադրումները լեզվաբանական որևէ բարդություն չեն հարուցում, այլ է սակայն սրանց տեղադրման և

հարաբերակցության խնդիրը:

Հոմերոսը ախայացիների հակառակորդ քաղաքն անվանում է մե՛րթ Տրոյա, մե՛րթ Իլիոն: Եվ քանի որ նույն քաղաքը չէր կարող միաժամանակ երկու անուն կրել, սովորաբար ենթադրվում է, որ այս անվանումներից մեկը նշանակել է երկիրը, մյուսը՝ դրա գլխավոր քաղաքը (Տրոյան՝ երկիրը, Իլիոնը՝ քաղաքը)[108]: Իսկ ինչպիսին է խեթական Վիլուսա-Տարուիսա զույգի հարաբերակցությունը:

Թուդխալիյաս II-ի տարեգրություններում[109] այս երկրները հանդես են գալիս արևմտյան Փոքր Ասիայի 22 երկրներից բաղկացած Ասսուվա միության կազմում: Ընդ որում Վիլուսան և Տարուիսան եզրափակում են ցուցակը: Եվ քանի որ այդ ցուցակի՝ մասնակիորեն վնասված առաջին երկրանունը՝ [...]-ukka-ն վերականգնում է [L]ukka - պատմական Լիկիա կամ Լիկաոնիա[110], ապա վերոհիշյալ 22 երկրները տեղադրվում են արևմտյան Փոքր Ասիայում՝ հարավից հյուսիս: Այսպիսով, մեծ հավանականություն կա, որ Վիլուսան և Տարուիսան կարող էին գտնվել Տրոադայում[111]: Խնդրի բարդությունը այն է, որ երկու անվանումները հանդես են գալիս «երկիր» դետերմինատիվով, այսինքն, դրանք խեթերի կողմից դիտվել են որպես առանձին երկրներ:

Արդյոք սա գրչի սխալի արդյունք է, որը կարող էր երկու անվանումները դիտել որպես առանձին երկրներ, թե իսկապես ինչ-որ տեղ հյուսիս-արևմտյան Փոքր Ասիայում գոյություն են ունեցել միմյանց հարևան երկու երկրներ, որոնց անունները դարեր հետո միավորվել են ավանդության մեջ որպես միևնույն քաղաքական միավորի անվանումներ:

Հարկ է նշել, որ Թուդխալիյաս II-ից հետո Տարուիսան այլևս չի հիշատակվում[112], մի փաստ, որը գուցե հնարավոր է բացատրել ինչպես 1) Տարուիսայի՝ պատմական ասպարեզից հեռանալով (միավորում Վիլուսայի կամ մեկ այլ քաղաքական միավորի հետ), այնպես էլ 2) խեթական աղբյուրների՝ տվյալ տարածքի վերաբերյալ եղած նյութի սակավությամբ: Առաջին տարբերակի դեպքում կարող է որոշակիորեն պարզվել հունական ավանդության մեջ երկրին տրված երկակի անվան առկայության պատճառը[113]:

Ինչպես պարզ է դառնում հոմերոսյան քաղաքի երկու ձևերի համար վիճարկվող խեթական նախատիպերի մասին պատմող աղբյուրներից, առայժմ դրանց նույնության օգտին են վկայում 1) այդ երկու անունների նմանությունը, 2) Ասսուվայի ֆեդերացիայի՝ հարավից հյուսիս տեղադրումը (Լուկկան՝ հարավում, Տարուիսան՝ հյուսիսում), 3) Մուվատալլիս II-ի տեքստում որպես Վիլուսայի արքա հիշատակվող Ալաքսանդուսի անվան և Տրոյայի արքա Պրիամոսի որդի Պարիսի երկրորդ՝ Ալեքսանդրոս անվան միջև ակնառու նմանությունը: Այդ

նույնության դեմ է վկայում, փաստորեն, միայն Վիլուսան և Տարուիսան հիշատակող խեթական տեքստերի հաղորդած տեղեկությունների սակավությունը, որը թույլ չի տալիս ճշգրիտ տեղայնացնելու դրանք:

Ըստ այդմ, կարելի է եզրակացնել, որ ներկայումս ավելի նպատակահարմար է ընդունելու հոմերոսյան և խեթական անվանումների միջև ենթադրվող կապը և տեղադրությունը Տրոադայում, քան ժխտել փաստական նյութի անբավարարության պատճառաբանությամբ, ՏՊ-ը համարելով ոչ պատմական, զուտ ժողովրդական ստեղծագործության միջոցով մեզ հասած մտացածին իրադարձություն:

ԷԳԵՅԱՆ ԾՈՎԻ ՓԱՍՏԱՐԿԸ

Այս փաստարկը գրեթե լռելյայն, աքսիոմատիկ եղանակով առկա է շատ մասնագետների մոտ (argumentum ex silentio)[114]: Իսկապես էգեյան ծովը մայրցամաքային Հունաստանը և Փոքր Ասիան միմյանցից տարանջատող այնպիսի խոշոր բնական արգելք էր, որպեսզի միկենցիները չկարողանային IIIA և IIIB փուլերի ընթացքում քաղաքական ակտիվություն ցուցաբերել արևմտյան Փոքր Ասիայում:

Ախխիյավայի խնդրին առնչվող ուսումնասիրություններում որոշակիորեն նկատվում է միկենյան աշխարհի քաղաքական կառուցվածքի վերաբերյալ հոմերոսյան պոեմներում պահպանված նյութի ազդեցությունը, ինչպես նաև մ.թ.ա. XV-XIII դարերի ախայան հասարակությունը ավելի ուշ շրջանի՝ մ.թ.ա. VIII-VI դարերի հունական «մեծ գաղութացման» ետնախորքի վրա դիտելու միտումը: Բացի այդ, ըստ այնպիսի մի հեղինակավոր պատմիչի, ինչպիսին էր Թուկիդիդեսը, միկենյան դարաշրջանում Հունաստանը իրենից ներկայացրել է միմյանցից անկախ կամ կիսանկախ մեծ թվով քաղաքների ամբողջություն, որը միայն ՏՊ-ի ժամանակ է միավորվել[115]: Ուրեմն ինչ հեռավոր արշավանքների մասին է խոսքը, երբ Միկենքի արքայի իշխանությունը հազիվ տարածվում էր Արգոլիդայի մի մասի վրա: Իսկ միկենյան ծագման խեցեղենի և այլ իրերի վիթխարի աշխարհագրությունը Փոքր Ասիայից մինչև Լևանտ և Եգիպտոս կարելի է հեշտությամբ բացատրել որպես առանձին քաղաք-պետությունների ինքնուրույն առևտրական կամ այլ բնույթի ձեռնարկումներ, որոնք երբեմն կարող էին ուղեկցվել առևտրական ֆակտորիաների հիմնադրումով այս կամ այն վայրում (ավելի ուշ շրջանի ապոյկիայի նախատիպը). վերջին դեպքում հնարավոր էին նաև ռազմական բախումներ տեղական բնակչության կամ քաղաքական միավորների հետ:

Քննարկվող փաստարկի հիմքում ոչ մի իրական փաստ չկա: Այն, ինչ այսօր հայտնի է մայրցամաքային Հունաստանի միկենյան կենտրոնների արտաքին առևտրական լայն գործունեության վերաբերյալ, որը լրացվում է Ախխիյավայի մասին խեթական տեքստերի տվյալներով, հոմերոսյան պոեմների և Թուկիդիդեսի հաղորդումներով, միկենյան քաղաքների թեկուզ ժամանակավոր և անկայուն միությունների գոյության հնարավորության առումով, կարծում ենք, բավական է ենթադրելու, որ էգեյան ծովը այնպիսի անհաղթահարելի արգելք չէր կարող լինել միկենյան աշխարհ - Փոքր Ասիա փոխհարաբերություններում, ինչպես ենթադրվում է:

ՏՐՈՅԱ VIIa-Ի ԱՎԵՐՄԱՆԸ ՄԻԿԵՆՑԻՆԵՐԻ ԱՆՄԱՍՆԱԿԻՑ ԼԻՆԵԼԸ

Այս փաստարկը պատկանում է ավելի շուտ կողմնակալ մոտեցման բնագավառին, քան որևէ լուրջ հիմնավորում ունի: Դրա հիմքը Տրոյա VIIa-ում հայտնվող թրակյան ծագման Coarse Ware-ն է, որը դեռ 1975թ. Ջ.Ռուտտերը դիտում էր որպես մայրցամաքային Հունաստանի՝ LH IIIC փուլի սկզբով թվագրվող «բարբարոսական» խեցեղենի զուգահեռ[116]: Նրա կարծիքով, երկու տարածաշրջաններում այս խեցեղենի հայտնվելը վկայում է Հյուսիսային Բալկաններից միաժամանակ դեպի Տրոադա և Հարավային Հունաստան ընթացած էթնիկական տեղաշարժի հետևանք: Հենվելով Ջ.Ռուտտերի ենթադրության վրա, Դ.Իսքենը Տրոյա VIIa-ն և միկենյան կենտրոնները կործանողներին փնտրում է Բալկանյան Թրակիայում[117]:

Հարկ է նշել, որ Coarse Ware-ի և «բարբարոսական» խեցեղենի ազգակցության մասին տեսակետն այժմ միայն նախնական ենթադրություն է[118], չխոսելով արդեն երկու վայրերում դրանց հայտնվելու ժամանակի և եղանակի անորոշության մասին: Եթե Տրոյա VIIa-ի կործանման ժամանակը և եղանակը որոշ չափով հնարավոր է վերականգնել (տե՛ս վերը), ապա նույնը չի կարելի ասել միկենյան կենտրոնների մասին:

Տրոյա VIIa-ի ավերմանը միկենցիների մասնակից լինել-չլինելու խնդիրը, բնականաբար, կապված է ՏՊ-ի թվագրման հետ: Քանի որ այդ խնդիրն առայժմ հնարավոր չէ լուծել առանց հետագա հիմնավորման, ապա, թվում է, կարելի է հարցը դիտել այլ տեսանկյունից:

Ենթադրենք, որ ՏՊ կոչվող իրադարձությունը տեղի է ունեցել միկենցիների կողմից Տրոյա VIh-ի ավերման ենթատեքստում, այսինքն, XIIIդ. առաջին կեսի ընթացքում: Կարող էր արդյոք դրանից հետո տեղ

գտնել միկենցիների մեկ այլ բախում Տրոադայի տարածքում գտնվող քաղաքական միավորի հետ:

Հնագիտորեն, իհարկե, մեծ հավանականություն կա, որ միկենցիներն անմասնակից պիտի լինեին Տրոյա VIIa-ի ավերմանը. նույնը կարելի է պնդել նաև Տրոյա VIIb1 : b2 անցման փուլի մասին: Տրոյա VIIb-ից հայտնաբերված LH IIIC խեցեղենի ութ բեկորների առկայությունը[119] չի կարող եղանակ ստեղծել. դրանք կամ պատահաբար են հայտնվել նախորդ շերտից, կամ կարող էին փոխանակման միջոցով ընկնել Տրոյա: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Տրոյա VIIa-ի ավերման և միկենյան կենտրոնների անկման միջև պարզորոշ ժամանակագրական կապը, նման հնարավորություն ենթադրել: Դրա օգտին են վկայում վերը բերված փաստարկները (տես «Հոմերոսյան Տրոյայի տեղայնացումը» բաժինը): Թվում է, որ ՏՊ-ի հավաստիության խնդիրը չպիտի անպայմանորեն կապվի հզոր միկենյան աշխարհի գոյության հետ: Միկենցիների բախումը Տրոադայի տարածքի բնակչության հետ կարող էր տեղի ունենալ նաև XIIIդ. վերջին տասնամյակների ընթացքում:

ՏՐՈՅԱ VIIa-Ի ԱՎԵՐՈՒՄԸ XIIդ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Ք.Պոդցուվայտի և Է.Բլոեդովի կողմից Տրոյա VIIa-ի ավերման թվագրումը XIIդ. երկրորդ կեսով, որ հիմնվում է այս հնագետների կողմից Կ.Բլեգենի՝ Տրոյայում հայտնաբերված խեցեղենի վերաթվագրման վրա[120], չի կիսվում հնագետների ճնշող մասի կողմից: Այդ իսկ պատճառով սույն փաստարկը, մինչև լրացուցիչ և հիմնավոր փաստական նյութի կուտակումը, անհամոզիչ է թվում:

«ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ» ԵՎ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

Այսպիսով, հաշվի առնելով նախորդ ենթաբաժիններում քննարկված խնդիրները, հնարավոր ենք համարում հանրագումարի բերել ՏՊ-ի ժամանակի և բնույթի, դրանում արտաքին գործոնի մասնակցության հարցերը:

Առկա գրավոր և հնագիտական նյութի հիման վրա XIIIդ. ընթացքում որոշակիորեն առանձնանում են երկու ժամանակահատվածներ, որոնք կարող են լիովին համապատասխանել հոմերոսյան պոեմներում նկարագրվող ՏՊ-ին: Առաջինը XIIIդ. 70-60-ական թվականներին Տրոյա VIh-ի ավերումն է, երկրորդը դրանից 1-2 սերունդ անց Տրոյա VIIa-ի ավերումը: Եթե Հոմերոսի պոեմներում իրոք արտացոլված է միկենյան հույների և Տրոյա-Հիսարլըկի տեղում գոյություն ունեցած քաղաքական միավորի ու նրա դաշնակիցների միջև ընթացած տևական պատերազմը, ապա վերոհիշյալ երկու ժամանակաշրջաններից որևէ մեկը պիտի հիմք ծառայեր դրա համար:

Տրոյա VIh-ի ավերումը լիովին հարմար է որպես ՏՊ-ի նախահիմք, քանի որ 1) առկա է խեթա-ախխիյավյան երկարատև հակամարտությունը արևմտյան Փոքր Ասիայում և հատկապես Վիլուսայի շուրջը, 2) առկա է հզոր Ախխիյավան (միկենյան աշխարհում գոյություն ունեցած որևէ քաղաքական միություն):

Նշված փաստարկներին անհրաժեշտ է ավելացնել նաև դեռ 1911թ. նկատված խեթական աղբյուրների Վիլուսայի արքա Ալաքսանդուսի անվան նույնությունը հոմերոսյան Տրոյայի արքա Պրիամոսի որդու Ալեքսանդրոս-Պարիսի անվան հետ[121]: Մուվատալլիս II-ի և Վիլուսայի արքայի միջև կնքված պայմանագիրը թվագրվում է Քաղեշի ճակատամարտին անմիջապես նախորդող շրջանով, այսինքն, մոտավորապես 1280թ.: Եթե նկատի ունենանք, որ 1) Պիյամարադուսի գործունեությունը այս տարածաշրջանում պիտի սկսվեր Մուվատալլիսի մահից (1272թ.) որոշ ժամանակ առաջ, 2) Տրոյա VIh-ի ավերումը թվագրվում է մոտավորապես նույն շրջանով, 3) Հոմերոսի մոտ Ալեքսանդրոս-Պարիսը ՏՊ-ի գլխավոր դրդապատճառն է, ապա դժվար չէ ենթադրել, որ Վիլուսայի Ալաքսանդուսը պիտի հանդիսանար հոմերոսյան կերպարի նախատիպը:

Տրոյա VIIa-ի ավերումը դժվար է վերագրել միկենյան հույներին, քանի որ դրա օգտին կարող են վկայել միայն 1) անտիկ պատմիչների հաշվարկները, որոնք ՏՊ-ը թվագրում են Տրոյա VIIa-ի ավերման շրջանով, 2) ՏՊ-ի հերոսների մի մասի դեգերումները արևելյան Միջերկրականում պատերազմից անմիջապես հետո, որը ժամանակագրորեն մոտ է «ծովի ժողովուրդների» տեղաշարժերին: Տրոյա VIIa-ի թեկնածության դեմ կարող են վկայել 1) VIIa-ի ավերումից հետո LH IIIC խեցեղենի բացակայությունը, 2) թրակյան ծագման Coarse Ware-ի առկայությունը:

Վերոհիշյալ փաստարկների ճնշման տակ այսօր հնարավոր ենք համարում նախապատվությունը տալու Տրոյա VIh-ին, սակայն մեկ կարևոր վերապահումով: Հնարավոր է, որ Հոմերոսի երկու պոեմները

ներկայացնեին միկենյան աշխարհի զարգացման երկու տարբեր՝ հաջորդական փուլերին բնորոշ իրավիճակներ: Առաջին փուլը քաղաքական մեծ ակտիվությունն էր արևմտյան Փոքր Ասիայում, որն արտացոլված է «Իլիականում» (Տրոյա VIh-ի ավերման շրջանը): Երկրորդ փուլը XIIIդ. երկրորդ կեսին միկենյան աշխարհի անկման գործընթացն է, որն ուղեկցվել է երկպառակտչական պատերազմներով և մայրցամաքային Հունաստանի զգալի թվով բնակավայրերի ապաբնակեցմամբ[122], այսինքն, արտագաղթով, որի մի ալիքը կարող էր հասնել արևմտյան և հարավային Փոքր Ասիա. այս վերջին իրադարձությունը կարող էր արտացոլվել «Ոդիսականում»:

Վերը ներկայացված պատկերը ստիպում է անմիջական կապ տեսնել Տրոյա VIh-ով նախնտրելի ՏՊ-ի թվագրման և դրանից որոշ ժամանակ անց միկենյան աշխարհի վայրընթաց զարգացման միջև: Խեթական տերության և միկենյան աշխարհի երկարատև հակամարտության կուլմինացիան՝ իր բոլոր դրվագներով իսկապես ի վիճակի էր պահպանվելու արևմտյան Փոքր Ասիայի բնակչության հիշողության մեջ և փոխանցվելու հոնիական հույներին: Վիլուսա-Տրոյայի գրավումը և ձեռքբերված ռազմավարը հազիվ թե լիովին փոխհատուցեին այն վիթխարի կորուստները, որ կրեցին միկենցիները Տրոադայում: Քաղաքը գրավվեց, սակայն Տրոյայի պարիսպների տակ զոհվեց միկենյան զորքի ծաղիկը: Տևական, տարբեր վտանգներով լի վերադարձ, որպեսզի տանը նոր փորձությունների հանդիպեին: Հոմերոսի աղբյուրները լավ էին գիտակցում ՏՊ-ի տեղն ու դերը միկենյան աշխարհի՝ «հերոսական դարաշրջանի» կյանքում. դա «Պյուռհոսյան հաղթանակ» էր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մայրցամաքային Հունաստանի միկենյան կենտրոնների հավաքական անվանումը խեթական աղբյուրներում (տե՛ս ստորև՝ տեքստում):
2. ՏՊ-ի ժամանակագրությանն առնչվող տեսակետների մասին տե՛ս Hiller, 1991: 145ff.; Bryce,1991: 1ff.
3. Garstang and Gurney, 1959: 101f.
4. KUB XXIII 11 և 12 (հրատարակությունը՝ Garstang and Gurney, 1959: 120ff.; Carruba, 1977: 158f.).
5. KBo VI 28 Obv.8-9.
6. Gurney, 1966: 24f.
7. KUB XIV 15 I 23-26; KBo III 4 II 28-32.
8. Տեղադրվում է Կայստրոսի (ժամանակակից Ակարչայ) և Սինդրոսի (ժամանակակից Բանազչայ) միջև (Garstang and Gurney, 1959: 90ff.), Կարիայի մի մասում՝ Մեանդրոսի (ժամանակակից Բյույուք Մենդերես) և Ինդոսի (ժամանակակից Էմիր) միջև (Cornelius, 1958: 394f.):
9. Տեղադրվում է Մեանդրոսի (Götze, 1957: 228) կամ Կաիկոսի (ժամանակակից Բաքրչայ) հովտում, այսինքն, Միսիայում (Garstang and Gurney, 1959: 96):
10. Կոնյայից հարավ-արևմուտք (Götze, 1940: 22f.; Garstang, 1944: 19), Սանգարիոսի ստորին հոսանքի շրջանում (Garstang and Gurney, 1959: 97ff.), անտիկ Կաբալիայի շրջանում՝ Ըսպարտայից արևմուտք (Cornelius, 1958: 396), Հերմոսի (ժամանակակից Գեդիզ) շրջանում (Houwink ten Cate, 1970: 64 n.45):
11. Ժամանակակից Սիվրիհիսարի շրջանում (Kinal, 1953: 31ff.) կամ ժամանակակից Ակշեհիրից հյուսիս (Otten, 1973: 121):
12. Վիլուսայի տեղադրման մասին հանգամանորեն ստորև:
13. Ենթադրվում է, որ Արցավան ուղղակի դաղարել է գոյություն ունենալ և նրա սարածքը բաժանվել է հարևան Սեխայի և Միրայի միջև (Singer, 1983: 206): Մուրսիլիսից հետո Արցավա անունը այլևս որևէ կոնկրետ քաղաքական իմաստ չունի, այլ ընդամենը նախկին Արցավա միության սարածքի ընդհանուր անվանումն է (Heinhold-Krahmer, 1977: 136ff.):
14. Mellink, 1986: 93. (հնագիտական գրականության մեջ կիրառվող LH հապավումը նշանակում է <u>ուշհելլադյան</u>):

15. Mee, 1984: 4ff.
16. Հմմտ. Podzuweit, 1982 (Տրոյա VIh = LH IIIC, այսինքն, XIIդ.):
17. Blegen, 1958: 5,11. Ա.Բլեգենը այս շերտի համար առաջարկում էր խիստ բարձր ժամանակագրություն՝ 1300-1260թթ., որն այսօր չի ընդունվում:
18. Blegen, 1975: 164.
19. Blegen, 1975: 162f. Տրոյա VIIa-ի անկման պահին լայնորեն կիրառվել է LH IIIB տիպի խեցեղեն, իսկ LH IIIC-ն դեռ հայտնի չի եղել: Սակայն տե՛ս Mee, 1984: 45f. Տրոյա VIIa-ում LH IIIC խեցեղենի 8 բեկորների առկայության մասին:
20. Blegen, 1975: 163.
21. Blegen, 1975: 163.
22. Hiller, 1991: 146.
23. Կարելի է թարգմանել որպես «ելունդավոր խեցեղեն»:
24. Blegen, 1975: 164.
25. Հոմերոսի կողմից Տրոյային տրվող մակդիրների մասին տե՛ս Клейн, 1986: 89сл.
26. Meyer, 1975: 163.
27. Singer, 1983; Bryce, 1985: 13ff., Güterbock, 1986. 37ff.
28. «Իլիականի» տեքստում տեղ չգտած՝ ՏՊ-ի պատմության տարբերակներում խոսվում է ոչ թե տասնամյա, այլ քսանամյա պատերազմի մասին (տե՛ս Гиндин, 1991: 32сл. и 51):
29. Nylander, 1963: 9f.; Finley, 1964: 5ff. և այլն: Այս փաստարկը միայն արտաքնապես է ամուր թվում: «Ողիսականում» և Nostoi-ներում հույն հերոսների տանջալի վերադարձի նկարագրությունը, նրանց զգալի մասի զոհվելը Տրոյայի պարիսպների տակ, Մուկենայի, Տեգեայի և այլոց առաջին հայացքից անբացատրելի ընթացքը դեպի հեռավոր Կիլիկիա, Կիպրոս ու Պաղեստին կարող են վկայել ոչ թե հզոր միկենյան աշխարհի, այլ ավելի շուտ անկում ապրող հասարակության առկայության օգտին (տե՛ս ստորև):
30. Фукидид, I 12.
31. Desborough, 1964: 221ff.
32. Mee, 1984: 58.
33. Vermeule, 1964: 276f.; Mylonas, 1964: 363; Desborough, 1964: 164 և այլն:
34. Տե՛ս Hammond, 1975: 686ff.
35. Blegen, 1958: 13; Andrews, 1955: 34; Page, 1959: 27.
36. Blegen, 1964: 143f. Երկրաշարժից Տրոյա VIh-ի կործանման մասին տեսակետն ընդունվում է ոմանց կողմից (Rapp, 1982: 58; Akurgal, 1983: 68) և վիճարկվում մյուսներից (Easton, 1985: 195; Mellink,

1986: 100; Bryce, 1989c: 18; 1991: 9):

37. Blegen, 1975: 164.
38. Hiller, 1991: 145ff.
39. Որպես պատմական զուգահեռ է բերվում Ալկիվիադեսի գլխավորած սիցիլիական արշավանքը մ.թ.ա. 415թ., Պելոպոնեսյան պատերազմում Աթենքի կրած ծանր պարտությունից 11 տարի առաջ (Hiller, 1991: 147): Պետության քաղաքական և մշակութային անկմանը անմիջականորեն նախորդող մեծ պատերազմների (այդ թվում՝ հաղթական) օրինակները շատ են Հին Արևելքի պատմության ողջ ընթացքում: Օրինակ, Ուրի III դինաստիայի վերջին արքա Իբբի-Սուենի հաղթական արշավանքը Էլամ՝ պետության անկման նախօրեին, Մերենպտահի հաջող պատերազմները Լիբիայում և Պաղեստինում, որին հետևեց շուրջ տասնհինգամյա համընդհանուր քաղաքական և տնտեսական անկման շրջանը, և, վերջապես, Տուպպիլուլիումաս II-ի հաջող արշավանքները Ասիա և արևմտյան Փոքր Ասիա՝ Խաթթիի արուումից քիչ ավելի վաղ:
40. Սրան պիտի ավելացնել նաև որոշ հերոսների սպանությունը վերադարձից հետո (Ագամեմնոն) և հայրենիքում կրած դժվարությունները ու նույնքան տանջալի վերադարձը (Ոդիսևս, Մենելայոս):
41. Նկատվել է նաև, որ, ըստ ավանդության, <u>կնքոսը</u> սնամեջ լակ է եղել, ինչպիսին էր Տրոյական ձին (Schachermeyr, 1950: 202):
42. Sommer, 1932.
43. Macqueen, 1968: 182ff.; Muhly, 1974: 134; Mellaart, 1978: 58; Easton, 1984: 34f.
44. Դեռ Է.Ֆոռերի կողմից առաջարկված այս համադրման (Forrer, 1924: 1ff.) վերաբերյալ կարծիքների մասին տե՛ս Houwink ten Cate, 1973:153.
45. Muhly, 1974: 129ff.; Ünal, 1989: 285f.
46. Easton, 1984: 34.
47. Podzuweit, 1982: 80; Bloedow, 1988: 30ff.; Muhly, 1992: 17.
48. Այս անվան Ախսիյա տարբերակը վկայված է միայն մեկ անգամ՝ «Մադդուվատտասի» տեքստում (Götze, 1928), որը թվագրվում է XVդ. երկրորդ կեսով (Աղնուվանդաս I), և մյուս բոլոր վկայություններից շատ ավելի վաղ է:
49. Ախսիյավա և Achai(w)oi տերմինների լեզվաբանական համադրման մասին տե՛ս Houwink ten Cate, 1973: 143ff.; Finkelberg, 1988: 127ff.
50. Տե՛ս ծանոթ. 44.

51. Friedrich, 1927: 87ff.
52. Götze, 1930: 285ff.
53. Schachermeyr, 1935; 1982.
54. Völkl, 1952: 329ff.; Dussaud, 1953: 75ff.; Heubeck, 1955: 131ff.; Aitchison, 1964: 28; Bryce, 1989c: 3ff. և այլն:
55. Sommer, 1932.
56. Sommer, 1937: 169ff. Լիակատար ժխտողական մոտեցումը առկա է նաև Գ.Շտայներին մոտ (Steiner, 1964: 365ff.):
57. Dussaud, 1953: 75ff.; հեղինակի կարծիքով, Էգեյան ծովի արևելքի կղզիները (Հռոդոս, Լեսբոս, Լեմնոս և այլն) և արևմտյան Փոքր Ասիայի ծովափը պատկանում էին այս միկենյան պետությանը. այսինքն, առաջարկվում էր միկենյան «բալասսոկրատիայի» տարբերակը:
58. Carratelli, 1950: 167; Völkl, 1952: 329ff.; Crossland, 1964: 848.
59. Bittel, 1950: 69ff.; Mellaart, 1955: 83; Heubeck, 1955: 131f.; Page, 1959: 15ff.
60. Kretschmer, 1954: 1ff.
61. Cavaignac, 1946: 58ff. նա հետագայում հակվեց դեպի մայրցամաքային Հունաստանը (Cavaignac, 1950: 38):
62. Easton, 1984: 34f.; Mellaart, 1984: 58.
63. Ենթադրվում է, որ XIVդ. Ալաշիայական Տրոադայում ձևավորված հունական պետություն է եղել, և XIIIդ. այդ անվանումը տարածվել է նաև ողջ միկենյան աշխարհի վրա (Houwink ten Cate, 1973: 152), նաև Macqueen, 1968: 179.
64. Otten, 1969; Carruba, 1969: 226ff.; Houwink ten Cate, 1970.
65. KUB XIV 1 + KBo XIX 38.
66. KUB XXIII 11 և 12: Հրատարակությունը՝ Carruba, 1977: 158ff.
67. Forrer, 1924: 21.
68. Օրինակ, Дьяконов, 1968: 112слл.
69. Sandars, 1978: 75f.
70. Bittel, 1967: 18, Fig.17.; նաև Mee, 1978: 121ff.
71. Ենթադրվում է, որ, հավանաբար, բացառությամբ Միլետի, Փոքր Ասիայի արևմուտքի «միկենյան բնակավայրերը» պիտի անկլավներ լինեին բուն փոքրասիական բնակավայրերում (Bryce, 1989c: 2):
72. Güterbock, 1984: 114ff.
73. Mellink, 1986: 94.
74. Sainer, 1976: 42ff. Պարզ չէ մայրցամաքային Հունաստանի արքայական տնտեսություններում փոքրասիական սարկոֆիների և նրանց երեխաների հայթայթման եղանակը (ռազմական բռնկման

ճանապարհով), սակայն անտիկ ավանդության մեջ պահպանվել են տեղեկություններ, ըստ որոնց Տիրինթոսի պարիսպները կառուցել են լիկիացի հսկաները (Страбон, 8. 6. 11): Սա կարող է վկայել հօգուտ Փոքր Ասիայի և Պելոպոնեսի միջև զոյություն ունեցած կանոնավոր փոխհարաբերությունների: Ըստ Զ.Տրիտշի, Միկենքի և Տիրինթոսի պարիսպների կառուցման տեխնիկան հայտնվում է XIV-XIIդդ. և դրա աղբյուրը Փոքր Ասիան է, իսկ Միկենքը կարող էր լինել այդ վիրաբասիական ազդեցության փոխանցողը (Tritsch, 1968: 131):

75. Թարգմանությունը ըստ Bryce, 1989b: 298.
76. Թարգմանությունը ըստ Güterbock, 1983: 134.
77. Güterbock, 1984: 119.
78. KUB XIV 15 I 23-26 (թարգմանությունը ըստ Bryce, 1989b: 299).
79. KBo III 4 II 28-32 (թարգմանությունը ըստ Bryce, 1989b: 299).
80. Bryce, 1989b: 299. Հնագիտորեն I.II IIIA 1-ի ընթացքում Միկենում ուժեղ ավերածություններ են գրանցված, որից գլխավորապես տուժել են միկենատիպ կառույցները (Mellink, 1983: 139): Թ.Բրայսը չի բացառում, որ այս ավերածությունը կարող էր Միլլավանդայի վրա Մուրսիլիս II-ի վերոհիշյալ արշավանքի հետևանքը լինել (Bryce, 1989c: 7):
81. KUB XIX 5 (= Garstang and Gurney, 1959: 95f.; Heinhold-Krahmer, 1977: 173ff.; Houwink ten Cate, 1983/84: 33ff.).
82. Friedrich, 1930: 42-102.
83. Güterbock, 1983: 137, n.26.
84. KUB XXIII 1 (Kühne, Otten, 1971: 10-11).
85. Idem: 26-29.
86. Օրինակ, Մաստուրիի կինը, որը Մուրսիլիս II-ի դուստրն էր, Խաթթուսիլիսից տարիքով մեծ էր. «Իմ հայրը՝ Մուրսիլիսը, չորս զավակ ունեցավ՝ Խալպասուլուպիը, Մուվատալլիը, Խաթթուսիլիսը և Maššana-IR-iš-ը: Սրանց բոլորի վերջինը ես էի» (KUB I 9-11): Դժվար թե Սեխայի զահաժառանգին Խաթթուսիլիսը կնության տար իր ավագ քրոջը, երբ վերջինս գրեթե 60 տարեկան էր. այդ մասին ուղղակիորեն նշվում է Խաթթուսիլիսին ուղղված Ռամզես II-ի նամակում (Edel, 1976: 31ff.; 53ff., 67ff.): Բացի այդ, իր «Ինքնակենսագրության» մեջ Խաթթուսիլիսը ոչ մի կերպ չի հիշատակում Մանապա-թարխունտասի վերադարձի և Մաստուրիի ամուսնության մասին: Եթե նա այդ հարցում ինչ-որ դեր խաղացած լիներ, ապա անպայման կնշեր, ինչը նա, որպես կանոն, անում է իր կենսագրությանն առնչվող խնդիրների կապակցությամբ:
87. KUB XIV 3 (= Sommer, 1932: 180-240; Garstang and Gurney, 1959:

111ff.): Այս «Նամակը», ինչպես նաև Մուվատալլիսին վերագրվող «Մանապա-թարխունտասի նամակը» ոմանց կողմից նույնիսկ թվագրվում է Մուրսիլիս II-ի կառավարման վերջին շրջանով (Macqueen, 1968: 180, n.104), որ բավական վաղ է: Այդ կարծիքին էր նաև Թ.Բրայսը իր վաղ շրջանի հոդվածներից մեկում (Bryce, 1979: 91ff.):

88. Թարգմանությունը ըստ Թ.Բրայսի (1989b: 303):

89. Ենթադրվում է, որ Պիյամարադուսի ժամանակավոր հենակետը Վիլուսան էր, որտեղից նա ասպատակում էր հարևան շրջանները (Houwink ten Cate, 1983/84: 51): Որ Պիյամարադուսի նախնական տիրույթը գտնվել է ինչ-որ ծովափնյա շրջանում, ակնհայտ է թեկուզ նրա հարձակումներին ենթարկված երկրների տեղադրությունից:

90. KUB XXI 33 IV 8'-11'. Մանապա-թարխունտասի վերադարձը Սեխա դժվար է կոնկրետ թվագրել. առաջարկվում է Մուվատալլիսի կամ Ուրխի-թեշուբի (Archi, 1971: 201, n.66), Ուրխի-թեշուբի (Houwink ten Cate, 1974: 129, n.29; 1993: 242) կամ Խաթթուսիլիսի շրջանը (Bryce, 1985: 16): Ի.Զինգերի կարծիքով (Singer, 1983: 210), «Նամակը» գրվել է Մուվատալլիսի օրոք, բայց Սեխայի արքան վերադարձել է իր երկիր Խաթթուսիլիսի ժամանակ:

91. «Տավագալավասի նամակում» Խաթթուսիլիսը, դիմելով Ասխիյավայի արքային, նշում է. «Եթե քո սիրտը Կարկիյայում է (կամ) Մասայում, գնա այնտեղ» (KUB XIV 3 IV 6): Այս երկրների հիշատակումը, գուցե, մատնանշում է Պիյամարադուսի նախնական տիրույթը մինչև ապստամբությունը:

92. Այդպես է, օրինակ, «Սաուսգամուվայի պայմանագրում» (KUB XXIII 1 IV 1-7): Ի դեպ, այստեղ նախապես հիշատակվել է նաև Ասխիյավայի արքան, սակայն հետագայում նրա անունը ջնջվել է:

93. Խաթթուսիլիսի թռուցիկ (տեքստում նրա անունը կորված է) տեքստում հայտնվում է հետևյալը. «Նա հեռացրեց(՞) Պիյամարադուսին» (KBo XVI 35 7'): Սա կարող է նշանակել միայն Պիյամարադուսի դեմ պայքարում Խաթթուսիլիսի հաջողությունը:

94. KUB XXIII 13. թարգմանությունը ըստ Güterbock, 1992: 242.

95. Otten, 1988: IV 32.

96. Տեքստի համապատասխան հատվածում, ըստ Ֆ.Զոմմերի թարգմանության (Sommer, 1932: 315), ասվում է հետևյալը. «Ասխիյավայի արքան նահանջեց» (խոսքը Թարխունարադուի դեմ Թուդխալիյասի մղած ճակատամարտի մասին է): Հ.Գ.Գյուտերբոկի կողմից appa ep - բայի իմաստի ճշգրտումը որպես «հույսը դնել», ի թիվս այլ իմաստների, թույլ է տալիս վերականգնելու «հույսը դրեց Ասխիյավայի արքայի վրա» (Güterbock, 1992: 240ff.):

97. Տե՛ս վերը ծանոթ. 86.
98. Hoffner 1983: 130ff.
99. Muhly, 1992: 10ff.
100. Sandars, 1978: 76f.
101. Desborough, 1964: 4f.
102. Լխխիյավան միկենյան աշխարհից տարանջատելու կողմնակիցները փորձում են ժխտել նաև Միլլավանդա-Միլեթ համապատասխանությունը. առաջինը առաջարկվում է տեղադրել Տրոադայում՝ Տրոյայի հարևանությամբ (Macqueen, 1968: 169ff.; Mellaart, 1984: 72): Վերջերս նման փորձերի վճռական քննադատությամբ հանդես եկավ Օ.Գրրնին (Gurney, 1992: 219ff.): Բացի տեղական հին ավանդույթներ ունեցող խեցեղենից ու այլ իրերից և ներմուծովի միկենյան արտադրանքից, այստեղ այլ մշակույթի հետքեր չեն նշմարվում ողջ ուշ բրոնզեդարի համար:
103. Այստեղ հաշվի չենք առնում Ատտար(իս)սիյասի հարձակումը Մադդուվատտասի վրա XVդ. երկրորդ կեսին:
104. Խեթական աղբյուրների Լխխիյավայի միջոցով արտահայտված տերմինի հավանական հունական կամ այլ նախատիպի մասին տե՛ս Andrews, 1955: 1ff.; Aitchison, 1964: 19ff.; Carruba, 1964: 269ff.; Houwink ten Cate, 1973: 144f.:
105. Vermeule, 1964: 233; Finley, 1970: 147ff.; Thomas, 1976: 95; Полякова, 1983: 110сл. և այլն: Ընդհանուր կարծիքից առանձնանում է Դեսբորոն: Ուշհելլադյան IIIB խեցեղենի միօրինակությունը ողջ միկենյան աշխարհում նա համարում է քաղաքական միասնության չափանիշ (Desborough, 1964: 219):
106. Տե՛ս ծանոթ. 105.
107. Kretschmer, 1924: 205ff.; Götze, 1924: 26 n.6; Huxley, 1960: 34. Վերջին շրջանում՝ Singer, 1983: 215; Houwink ten Cate, 1983/84: 48 n.38; Güterbock, 1986: 33ff.; Gurney, 1992: 221.
108. Güterbock, 1986: 40. Դարստանգը և Գրրնին ենթադրում են, որ հոմերոսյան քաղաքը Տարուիսա-Տրոյան է եղել, իսկ երկիրը՝ Վիլուսա-Իլիոնը (1959: 104): Լ.Կլեյնը, հենվելով Թուդխալիյաս IV-ի վերոհիշյալ հաղորդման, ինչպես նաև «Իլիականում» Իլիոս և Տրոյա անվանումներին տրվող մակդիրների միջև եղած ակնառու տարբերության վրա, գտնում է, որ դրանք երկու տարբեր քաղաքական միավորներ են եղել: Ըստ նրա, հոմերոսյան պոեմներում միահյուսվել են այդ երկու քաղաքների դեմ միկենյան հույների ձեռնարկած արշավանքների պատմությունները: Առաջարկվում է Տրոյայի նույնացումը Տրոադային հարող Լեմնոս կղզու վրա գտնվող Պոլիոխնիի հետ, որն ավերվել էր դեռ XVIդ.

(1986: 106):

109. KUB XXIII 11 և 12.

110. Լուկկայի տեղադրման մասին տե՛ս del Monte und Tischler, 1978: 250.

111. Garstang and Gurney, 1959: 101ff.; Heinhold-Krahmer, 1977: 350ff.; Güterbock, 1986: 41.

112. Վերջերս Անկարայի հնագիտական թանգարանի պահեստներից հայտնաբերված և Թուդխալիյաս II-ի շրջանով թվագրվող գավաթի վրա ընթերցվեց վոքրասիական հիերոգլիֆներով գրված Տարուիսայի անունը. «Երբ Թուդխալիյան նվաճեց Tara/i-wa/i-za-wa/i-ն» (NAS, 1995/2: 5):

113. Դ.Իսքնը չի ընդունում Տարուիսա-Տրոյա նույնությունը: Նրա կարծիքով, հոմերոսյան քաղաքը խեթական աղբյուրներում հիշատակվող Ատրիյան է: Իլիոնի նախատիպ է դիտվում Տրոադայի արևելքում կամ հարևանությամբ հիշատակվող Իյալանդա երկիրը (Easton, 1984: 30,59):

114. Ոմանք նույնիսկ խնդիրը վոխադրում են հռետորական հարցադրման ասպարեզ. «արդյոք խեթերը և հույները (այսինքն, միկենցիք) գիտեին միմյանց» (Ünal, 1989: 285):

115. Այս միտումը առկա է դեռ Թուկիդիդեսի մոտ (I. 3):

116. Rutter, 1975: 17ff.

117. Easton, 1984: 34f.

118. Կարելի է միանշանակ համաձայնվել Թ.Բրայսի դիտողության հետ Ջ.Ռուտտերի և այլոց տեսակետի առնչությամբ. «Ներկայումս այն չափազանց մտահայեցողական է լուրջ քննարկման համար» (Bryce, 1989c: 4 n.17):

119. Mee, 1984: 58.

120. Podzuweit, 1982: 80; Bloedow, 1988: 26ff.

121. Luckenbill, 1911: 85f.

122. Desborough, 1964: 221ff.; Hammond, 1975: 350ff. և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Дьяконов И.Н.

1968. Предыстория армянского народа. -Ереван: Изд. АН Арм ССР.

Гиндин Л.А.

1991. Троянская война и Аххиява хеттских клинописных текстов, "Вестник древней истории", 3, сс.28-51.

Гиндин Л.А. и Цымбурский В.Л.

1986. Античная версия исторического события, отраженного в KUB XXIII 11, "Вестник древней истории", 1, сс.81-87.

Клейн Л.С.

1986. Илион и Троя. К характеристике формирования и источников гомеровского эпоса, "Народы Азии и Африки", 4, сс.86-116.

Полякова Г.Ф.

1983. От микенских дворцов к полису. - В кн.: "Античная Греция", I. -Москва, сс.89-127.

Страбон

1964. География (перевод, статья и комментарии Г.А.Стратановского). -Москва: Наука.

Фукидид

1981. История (Стратановский Г.А., Нейхард А.А., Боровский Я.М.). -Ленинград: Наука.

Aitchison J.M.

1964. The Achaean Homeland: Akhaiwia or Akhaiwis?, "Glotta" 42, pp.19-28.

Akurgal E.

1983. Das Dunkle Zeitalter Kleinasiens. -In:"Griechenland", S.67-78.

Archi A.

1971. The Propaganda of Hattusilis III, "SMEA" XIV, pp.185-215.

Bittel K.

1950. Grundzüge der Vor-und Frühgeschichte Kleinasiens (2.erweiterte Auflage). -Tübingen: Verlag Ernst Wasmuth.

Blegen C.W.

1958. Troy IV. -Princeton: Princeton University Press.

1964. Troy and the Trojans. -New York: Thames & Hudson.

1975. Troy VII. -In:"CAH" II/2, pp.161-164.

Bloedow E.F.

1988. The Trojan War and Late Helladic IIIC, "PZ" 63, pp.23-52.
Bronze Age Migrations
1974. Bronze Age Migrations in the Aegean. Archaeological and Linguistic Problems in Greek Prehistory. Proceedings of the First International Colloquium on Aegean Prehistory, Sheffield, Organized by the British Association for Mycenaean Studies and the Departments of Greek and Ancient History of the University of Sheffield (eds.R.A.Crossland and A.Birchall).
-Park Ridge /Sheffield: Noyes Press.
Bryce T.R.
1979. Some Reflections on the Historical Significance of the Tawagalawas Letter (KUB XIV 3), "Orientalia" 48, fasc.1, pp.91-96.
1985. A Reinterpretation of the Milawata Letter in the Light of the New Join Piece, "AnSt" XXXV, pp.13-23.
1989a. Some Observations on the Chronology of Suppiluliuma's Reign, "AnSt" 39, pp.19-30.
1989b. Ahhiyawans and Mycenaeans - an Anatolian Viewpoint, "OJA" 8(3), pp.297-310.
1989c. The Nature of Mycenaean Involvement in Western Anatolia, "Historia" XXXVIII, H.1, pp.1-21.
1991. The Trojan War in its Near Eastern Context, "JAC" 6, pp.1-21.
Carratelli G.P.
1950. Ahhijava, Lazpa et leurs divinites dans KUB V 6, "JKF" 1, p.156-163.
Carruba O.
1964. Wo lag Ahhijawa?. -In: "Compte rendu de l'onzieme Rencontre Assyriologique Internationale organisee a Leiden du 23 au 29 juin 1962 par le Nederlands Instituut voor het Nabije Oosten". -Nederlands Instituut voor het Nabije Oosten. -S.38-46.
1969. Die Chronologie der hethitischen Texte und die Geschichte der Grossreichszeit, "ZDMG". Suppl.I, S.226-249.
1977. Beiträge zur mittelhethitische Geschichte. I-II, "SMEA" XVIII, S.137-195.
Cavaignac E.
1946. La question hittite-achéenne d'apres les dernieres publications, "BCH" 70, p.58-66.
1950. Les Hittites. -Paris: Maisonneuve.
Cornelius Fr.
1958. Zur hethitischen Geographie: die Nachbarn des Hethiterreiches, "RHA" XVI/62, S.1-17.

Crisis
1992. The Crisis Years: the 12th Century B.C. From Beyond the Danube to the Tigris (eds.W.A.Ward and M.S.Joukowsky). -Dubuque: Kendall/Hunt Publishing Company.
Crossland R.A.
1964. Immigrants from the North. -In:"CAH", vol.I, Ch.XXVII, pp.824-879, 989-993.
Desborough V.R.d'.
1964. The Last Mycenaeans and their Successors.An Archaeological Survey ca.1200-1000 B.C. -Oxford: Clarendon Press.
Dussaud R.
1953. Prélydiens, Hittites et Achéens. -Paris: Geuthner.
Easton D.F.
1985. Has the Trojan War been Found?, "Antiquity" 59, pp.188-195.
Edel E.
1976. Ägyptische Ärzte und ägyptische Medizin am hethitischen Königshof. -Opladen: Veröffentlichungen der Rheinisch Westfalischen Akademie der Wissenschaften.
Festschrift H.G.Güterbock
1974. Anatolian Studies Presented to Hans Gustav Güterbock on the Occasion of his 65th Birthday (eds.K.Bittel, Ph.H.J.Houwink ten Cate and E.Reiner). -Istanbul: L'Institut Historique et Archéologique Neerlandais de Stamboul.
Festschrift S.Alp
1992. Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp (eds.H.Otten, H.Ertem, E.Akurgal, A.Süel). -Ankara: Türk Tarih Kurumu Basimevi.
Finley M.I.
1964. The Trojan War, "JHS" 84, pp.1-9.
1970. Early Greece. The Bronze and Archaic Ages. -London.
Finkelberg M.
1988. From Aḫḫiyawa to Akhaioi, "Glotta" 66, pp.127-134.
Forrer E.
1924. Vorhomerische Griechen in den Keilschrifttexten von Boghaz-köi, "MDOG" 63, S.1-22.
Friedrich J.
1927. Werden in den hethitischen Keilschrifttexten die Griechen erwähnt?, "KIF" 1/1, S.87-107.
Garstang J.
1944. The Hulaya river-land and Daddassas: a crucial problem in Hittite

geography, "JNES" 3, pp.14-37.
Garstang J. and Gurney O.R.
1959. The Geography of the Hittite Empire. -London: The British Institute of Archaeology at Ankara.
Gotze A.
1928. Madduwattaš. -Leipzig ("MVAG" XXXII): Hinrichs'sche Buchhandlung.
1930. Neue Bruchstücke zum grossen Text des Hattušilis und den Paralleltexten. II. -Leipzig: Hinrichs'sche Buchhandlung.
1940. Kizzuwatna and the Problem of Hittite Geography. -New Haven: Yale Oriental Series.
1957. Kleinasien (2.neubearbeitete Auflage). -München: Beck'sche Verlagsbuchhandlung.
Griechenland
1983. Griechenland, die Ägäis und die Levante während der "Dark Ages" vom 12. bis zum 9.Jh. v. Chr.. Akten des Symposions von Stift Zwettl (NÖ) 11. -14. Oktober 1980 (Hrsg. von S.Deger-Jalkotzy). -Wien: Österreichischen Akademie der Wissenschaften.
Gurney O.R.
1962. Anatolia c.1750-1600. -In:"CAH" II, Ch.VI, pp.1-33.
1966. Anatolia c.1600-1380. -In:"CAH" II, Ch.XV(a), pp.1-30.
1992. Hittite Geography: thirty years on. -In:"Fs.S.Alp", pp.213-221.
Güterbock H.G.
1967. The Hittite Conquest of Cyprus Reconsidered, "JNES" 26, pp.73-81.
1983. The Hittites and the Aegean World: the Ahhiyawa Problem Reconsidered, "AJA" 87/2, pp.133-138.
1984. Hittites and Akhaeans: a New Look, "PAPS" 128, No.2, pp.114-122.
1986. Troy in Hittite Texts? Wilusa, Ahhiyawa, and Hittite History. -In:"Troy and the Trojan War", pp.33-44.
1992. A new look at one Ahhiyawa text. -In:"Fs. Sedat Alp", pp.235-243.
Hammond N.G.L.
1975. The End of Mycenaean Civilization and the Dark Age. The Literary Tradition for the Migrations. -In:"CAH" II/2, pp.678-712.
Heinhold-Krahmer S.
1977. Arzawa. Untersuchungen zu seiner Geschichte nach den hethitischen Quellen. -Heidelberg: Carl Winter Universitätsverlag.
Heubeck A.
1955. Review of R.Dussaud, Prélydiens, Hittites et Achéens (Paris, 1953),

"OLZ" 50, S.131-134.

High, Middle or Low?

1987. High, Middle or Low? Acts of an International Colloquium on Absolute Chronology Held at the University of Gothenburg 20th-22nd 1989 (=SMA 80). -Gothenburg: Paul Åströms Forlag.

Hiller S.

1991. Two Trojan Wars? On the Destructions of Troy VIh and VIIa, "Studia Troica" 1, pp.145-154.

Hoffner H.A.Jr.

1983. The Milawata Letter Augmented and Reinterpreted. -In: "28ème Rencontre Assyriologique Internationale, Vienna, 1981", "AfO" Beiheft 19, pp.130-137.

Houwink Ten Cate Ph.H.J.

1970. The Records of the Early Hittite Empire (c.1450-1380 B.C.). -Leiden: Publications de l'Institut historique et archéologique neerlandais de Stamboul.

1973. Anatolian Evidence for Relations with the West in the Late Bronze Age. -In:"Bronze Age Migrations", pp.141-161.

1974. The Early and Late Phases of Urḫi-Tešub's Career. -In: "Festschrift H.G.Güterbock", pp.123-150.

1983/4. Sidelights on the Ahhiyawa Question from Hittite Vassal and Royal Correspondence, "JEOL" 28, pp.33-79.

1993. Urhi-Tessub Revisited, "BiOr" 51, Nos.3-4, pp.234-260.

Huxley G.L.

1960. Achaeans and Hittites. -Oxford: Oxford University Press.

Kinal F.

1953. Géographie et l'Histoire des Pays d'Arzawa. -Ankara.

Kretschmer P.

1924. Alakšanduš, König von Viluša, "Glotta" 13, S.205-213.

1954. Achäer in Kleinasien zur Hethiterzeit, "Glotta" 33, S.1-25.

Kühne C., Otten H.

1971. Der Šauštamuwa-Vertrag. -Wiesbaden: Harrassowitz.

Luckenbill D.D.

1911. A possible occurence of the name Alexander in the Boghaz-Keui tablets, "CPh" 6, pp.85-86.

Macqueen J.G.

1968. Geography and History in western Asia Minor in the second millennium B.C., "AnSt" 18, pp.169-185.

Mee C.

1978. Aegean Trade and Settlement in Anatolia in the Second

Millennium B.C., "AnSt" 28, pp.121-156.
1984. The Mycenaeans and Troy. -In:"The Trojan War", pp.45-56.
Mellaart J.
1955. Some prehistoric sites in north-western Anatolia, "IM" 6, pp.53-88.
1978. The Archaeology of Ancient Turkey. -Totowa, NJ: Rowman and Littlefield.
1984. Troy VIIA in Anatolian Perspective. -In:"The Trojan War", pp.65-82.
Mellink M.J.
1983. Archaeological Comments on Aḫḫiyawa-Achaians in western Anatolia, "AJA" 87, pp.138-141.
1986. Postscriptum. -In:"Troy and the Trojan War", pp.93-101.
Meyer E.
1975. Gab es ein Troja?, "Grazer Beitrage" 4, S.153-169.
Monte del F. und Tischler J.
1978. Die Orts - und Gewässernamen der hethitischen Texte (RGTC 6). -Wiesbaden: Harrassowitz.
Muhly J.D.
1974. Hittites and Achaeans: Aḫḫiyawa Redomitus, "Historia" 23, pp.129-145.
1992. The Crisis Years in the Mediterranean World: Transition or Cultural Disintegration?. -In:"Crisis", pp.10-26.
Mylonas G.E.
1964. Priam's Troy and the Date of its Fall, "Hesperia" 33, pp.352-380.
Nylander C.
1963. The Fall of Troy, "Antiquity" 37, pp.6-11.
Otten H.
1969. Sprachliche Stellung und Datierung des Madduwatta-Textes. -Wiesbaden: Harrassowitz.
1973. Ḫariiati. A. -In:"RIA" IV, Lief.2/3, S.121.
1988. Die Bronzetafel aus Boğazköy: Ein Staatsvertrag Tuthaliyaš IV (StBoT, Beiheft 1). -Wiesbaden: Harrassowitz.
Page D.L.
1959. History and the Homeric Iliad. -Berkeley and Los Angeles: University of California Press.
Podzuweit Ch.
1982. Die mykenische Welt und Troja. -In: "Südosteuropa zwischen 1600 und 1000 v.Chr. (Hrsg. B.Hansel). -Berlin: Moreland. -S.65-88.
Rapp G.
1982. Earthquakes in the Troad. -In:"The Archaeological Geology.

Suppl.Monogr.4" (eds. Rapp G.Jr. and J.A.Gilford). -Princeton: Princeton University Press. -pp.43-58.

Rutter J.
1975. Ceramic Evidence for Northern Intruders in Southern Greece at the Beginning of the Late Helladic IIIC Period, "AJA" 79, pp.17-32.

Sainer A.P.
1976. An Index of the Place Names at Pylos, "SMEA" XVII, pp.93-116.

Sandars N.K.
1978. The Sea Peoples. -London: Thames & Hudson.

Schachermeyr F.
1935. Hethiter und Achäer. -Leipzig, Mitteilungen der Altorientalischen Gesellschaft 9,1-2.
1950. Poseidon und die Entstehung des Griechischen Götterglaubens. -Bern: Francke Verlag.
1982. Die Levante im Zeitalter der Wanderungen vom 13. bis zum 11. Jahrhundert v.Chr. (Die ägäische Frühzeit.5). -Wien: Sitzungsberichte der Österreichischen Akademie der Wissenschaften 387.

Singer I.
1983. Western Anatolia in the Thirteenth Century B.C., "AnSt" 33, pp.205-217.

Sommer F.
1932. Die Aḫḫijava-Urkunden, München. -Abhandlungen der Bayerischen Akademie der Wissenschaften, Phil.-hist.Abteilung, N.F.6.
1937. Aḫḫijava und kein End?, "IF" 55, S.169-297.

Steiner G.
1964. Die Aḫḫijawa-Frage Heute, "Saeculum" 15, S.365-392.

Stubbings F.H.
1975. The Recession of Mycenaean Civilization. -In:"CAH" II/2, pp.338-358.

The Trojan War
1984. The Trojan War. Its Historicity and Context. Papers of the First Greenbank Colloquium, Liverpool, 1981 (eds.L.Foxhall and J.K.Davies). -Bristol: Bristol Classical Press.

Thomas C.G.
1976. The Nature of Mycenaean Kingship, "SMEA" XVII, pp.93-116.

Tritsch F.J.
1968. Tirynthia Semata, "Kadmos" 7, pp.124-137.

Troy and the Trojan War

1986. Troy and the Trojan War: A Symposium Held at Bryn Mawr College. October 1984 (ed.M.J.Mellink). -Bryn Mawr: Bryn Mawr College.

Ünal A.

1989. On the Writing of Hittite History, "JAOS" 109/2, pp.283-287.

Vermeule E.D.T.

1964. Greece in the Bronze Age. -Chicago/London: The University of Chicago Press.

Völkl K.

1952. Achchijawa, "La Nouvelle Clio" 4, S.329-359.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

AfO - Archiv für Orientforschung (Graz).

AJA - American Journal of Archaeology (Princeton).

AnSt - Anatolian Studies (London).

BCH - Bulletin de correspondance hellenique (Paris).

BiOr - Bibliotheca Orientalis (Leiden).

CAH - Cambridge Ancient History (Cambridge).

CPh - Classical Philology (Chicago).

IF - Indogermanische Forschungen (Berlin).

IM - Istanbuler Mitteilungen (Istanbul und Tubingen).

JAC - Journal of Ancient Civilizations (Changchun).

JAOS - Journal of the American Oriental Society (Boston).

JEOL - Jaarbericht van het Vooraziatisch-Egyptisch Genootschap "Ex oriente lux" (Leiden).

JHS - Journal of Hellenic Studies (London).

JKF	-	Jahrbuch für kleinasiatische Forschung (Istanbul).
JNES	-	Journal of Near Eastern Studies (Chicago).
KBo	-	Keilschrifttexte aus Boghazköi (Leipzig und Berlin)
KIF	-	Kleinasiatische Forschungen (Hrsg. von F.Sommer und H.Ehelolf) (Weimar).
KUB	-	Keilschrifturkunden aus Boghazköi (Berlin).
MVAG	-	Mitteilungen der Vorderasiatisch-Ägyptischen Gesellschaft (Leipzig).
NAS	-	Newsletter for Anatolian Studies (Chicago).
OJA	-	Oxford Journal of Archaeology (Oxford).
OLZ	-	Orientalistische Literaturzeitung (Berlin).
PAPS	-	Proceedings of the American Philosophical Society (Philadelphia).
PZ	-	Prähistorische Zeitschrift (Berlin).
RHA	-	Revue hittite et asianique (Paris).
RIA	-	Reallexikon der Assyriologie und vorderasiatische Archäologie (Berlin und New York).
SMEA	-	Studi micenei ed egeo anatolici (Roma).
StBoT	-	Studien zu den Bogazköy-Texten (Wiesbaden).
ZDMG	-	Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft (Wiesbaden).

[350 դր.]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Խեթերը արևմտյան Փոքր Ասիայում	5
Տրոյա-Հիսարլըկի ուշբրոնզեդարյան ժամանակագրությունը	6
Հոմերոսյան Տրոյայի տեղայնացումը	8
Ախսխյավա - միկենյան Հունաստան խնդիրը	12
Ախսխյավան խեթական աղբյուրներում	16
Ախսխյավայի քաղաքականությունը Փոքր Ասիայում	23
«Տրոյական պատերազմը» և էքնիկական տեղաշարժերը	30
Ծանոթագրություններ	33
Օգտագործված գրականության ցանկ	41
Համառոտագրությունների ցանկ	48

Գրքի հրատարակությունը՝
Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Printed by
INSTITUTE OF ORIENTAL STUDIES
National Academy of Sciences Republic of Armenia

Տեքստի համակարգչային հավաքը. ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի աշխատակից
Վարդգես Գասպարյան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0198193

A II
84138